



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՄԻՑ-ՇԱՀԷՆ

ՍԷՅԷՐՆԵՐՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ)

Գրեց

ԱՐՄԷՆ ՏԻՐԱՆ



ԳՈՍԹԸՆ

Տպագր. «Զայն Հայրենեաց»ի

1903

(47. 925)

$\frac{1}{5}$

9W

ՍԻՄՅԱՆ

S-66

202  
ԱՌ 58.0  
օր 2

# ՄԻՑ-ՇԱՀԷՆ ԱԷՖԻՐԵՆՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ)

Գրեց  
ԱՐՍԷՆ ՏԻՐԱՆ



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ԵՆՈՐՀԱԼԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ST. NERSES SHNORHALI  
LIBRARY

ՊՈՍԹԸՆ  
Տպագր. «Շայն Հայրենեաց»ի  
1903

### ՅԱՌԱՋԱՆԻՄՆԻ ՏԵՂ

Ընկերներու փափաքով՝ Ամերիկայէն մեկնելէ առաջ՝ Միսօն ինձ պատմեց իր կեանքի գլխաւոր դէպքերը: Երբ Մշեցի Կարիճին սպաննութեան գոյժը հոս հասաւ և տեսայ որ ուրիշ մէկուն քով չի կար իր կեանքին աւելի լիակատար ծանօթութիւն, փորձեցի կարգի դնել քովիս համառօտ նօթերը:

Կարևոր է Միսօի կենսագրութիւնը, որովհետև այդ կեանքը կապուած է Հայ Յեղափոխութեան մէկ քանի նշանաւոր անցքերուն հետ: Միսօն իր կեանքով պատկեր մը կը ներկայացնէ Հայ ժողովրդի հոգեբանութեան: Հայ Յեղափոխութեան սկիզբէն մինչև մեր օրերը ամբողջ շրջանի մը պայծառ ցոլացումը կարելի էր տեսնել Միսօի ջինջ հոգիին մէջ:

Ուրիշ ժողովուրդներ իրենց հերոսները արձաններով կը պատուեն: Մերինները դաւաճան դաշոյնի գոհ կ'երթան: Վատեր կան որ անհաշտ թշնամութիւն ունին իրենց ցածհոգի գոյութենէն վեր բարձրացող գլուխներու դէմ:

Բառերը կը պակսին Եղբայրասպան Ոճիրին դէմ դայրոյթ արտայայտելու: Միսօի կեանքը թո՛ղ իր պարզ վեհութեան մէջ՝ հայ հասարակութեան ցոյց տայ թէ ի՛նչ մեծ կորուստ էր Կարիճին մահը և թէ ի՛նչ ստորնութեան ընդունակ է Եղբայրադաւ Ատելութիւնը:

Ա. Տ.



Այս հատորին վաճառուէն գոյացած գումարը  
ամբողջապէս պիտի յատկացուի մեր անմոռանալի  
ընկեր՝ Մխօ-Շահէնի սգաւոր ընտանիքին :



ՄԽՕ-ՇԱՀԷՆ ՍԷՖԷՐԵԱՆ

## ԿԵՆՍԱՆԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Չմբան ցուրտ գիշեր մը, վառարանին քով, նըստած էինք առանձին: Եւ Մխօն՝ իմ թախանձանքիս վրայ՝ այսպէս սկսաւ պատմել ինձի.

— Ծնունդի թուականս չեմ յիշեր: 1866ին մօտերը ծնած եմ Մշոյ Տէրգէվանք գիւղը: Հայրս Հողագործ էր: Առողջ, յաղթանդամ մարդիկ էին մեր ընտանիքի մարդիկը, միայն ես պղտիկ մնացի: Մեծ հայրս՝ Սրբօ ասպատակ է եղեր, հօրեղբայրս՝ Մարխօն՝ նշանաւոր կտրիճ եղոյին հետ ընկերաբար՝ ասպատակութիւն ըրեր է. սակայն մեր տանը ամենէն մեծ կտրիճը մեծ հօրեղբայրս՝ Վարդանն է եղեր. մօլլա մը կողոպտած ըլլալուն համար՝ Մօլլա Վարդան անուկը տուեր են իրեն: Մօլլա Վարդանին քաջութիւնները բոլոր գիւղացիները գիտէին:

Առաջին անգամ աչքս բացուեցաւ, երբ Չախալ Յովհաննէսը տեսայ: Չախալը Մշեցի տղայ մըն էր, ներսէսեան ուսանող: Գոյրը տեսնելու եկեր էր Թիֆլիզէն: Ծանօթացայ Չախալին հետ: Մեզի խրատ կուտար որ խումբեր կազմենք, գէնք առնենք, վարժըինք, ու Բաֆֆիէն պատմութիւններ կը պատմէր: Գարնան՝ Չախալը գնաց: 1884ին աշխատելու համար Թիֆլիզ գացի: Հայրենակիցներ շատ կային, գործ մը գտան. կամաց կամաց շատ Մշեցիներ ձանչ-

ցայ ընկեր մշակներու մէջ: Ամենս խումբով կը գործէինք. զիս մշակներու հսկող ըրին: Մշակութեան գործը դիւրին չէ. տարբեր խումբերու մէջ շատ անգամ կռիւ կար, տեղացիական կռիւ, Պուլանըխցի վարպետը Մշեցիին գործ չէր տար, Մշեցին ալ Պուլանըխցիին: Հսկողները իրենց ուզած մարդիկը կը բերեն՝ օրականներէն մէկ մասը կաշառք առնելով: Օր մը անիրաւ կոպէկ մը մտած չէ գրպանս, ընդհակառակը, հայրենակիցներու օգնելու համար շատ վնաս ալ կրեր եմ. իմ դիրքս ունեցող ուրիշներ շատ դրամով հայրենիք կը դառնային, ես մըշակներուն համար ասոր անոր հետ կռիւ կ'ընէի: Գործատէրը աւագակ եղբայր մը ունէր որ՝ իր եղբայրը խաբելէ վերջ՝ կ'ուզեր մեր օրականներն ալ զեղջէլ իր հաշույն: Կռիւի բռնուեցանք մարդուն հետ, իրարու վրայ պռուցինք, գործատէրը լսեց, հասկցաւ խնդիրը, եղբայրը քշեց: Գործատէրը զիս շատ կը սիրէր, կ'ուզէր որ միշտ իր քով մնամ, սակայն ձանձրացեր էի Թիֆլիզէն ու հայրենիք դառնալու փափաքը սիրտս կը վառէր: Մշեցի ուսանողներ թերթերէն բաներ կը պատմէին: Արծրունին կը ձանձնային մշակներէն ոմանք, շատ Մշեցիներու գործ կը գանչէր, «Մշակ»ի խմբագրատունը կը վազէին՝ երբ գանգատ մը, ցաւ մը ունենային: Այս կերպով Մշեցիներէն ոմանք, սկսեր էին իմանալ թէ հայկական խնդիր մը կայ, թէ Հայրենիքի մէջ հայը պէտք է թուրքին, քիւրտին դէմ իր կեանքը, պատիւը պաշտպանէ: Այս գաղափարները ես ալ ունէի երբ 1887ին հայրենիք վերադարձայ: Հետս տարի Ռաֆֆիին «Խենթ»ը. անկէ զատ Վարդենիսէն ալ՝ գրքեր բերել կուտայինք: Երիտասարդներ մէկտեղ խմբուելով կարդալ կուտայինք: Թէ՛ գրքերու ազդեցութիւնը

նը և թէ Ռուսաստան տեսած ազատութիւնս պատճառ եղան որ երկրի վիճակը շատ գէշ երևի աչքիս: Կարծես օդը նեղ կուգար. ազատութեան փափաքը արթնցած՝ գործ մը, շարժում մը ընելու կը մղէր մեզ: Երիտասարդներ ընկերութիւն մը կազմեցինք, մեր նպատակն էր գիւղական շահերը պաշտպանել, — չթողուլ որ քրդերը մեր տաւարը տանին, արտերը աւրեն, նպատակ ունէինք նաև աղքատները պաշտպանել գիւղացի հարուստ աղաներէն: Մտածելով ու խօսելով մեր մտքին սահմանն ալ կ'ընդարձակուէր: Տեսանք որ ուրիշ գիւղացիներ ալ նոյն կերպ միութիւններ կազմեր են, ոմանք աւելի առաջ երթալով՝ գէնք ալ գներ էին: Փոխադարձ յարաբերութիւն հաստատելով՝ կապուեցանք միւսներուն հետ, — Վարդենիս, Արածոնք ու Խորս գիւղերու ընկերութեանց հետ միացանք: Հիմա գիւղին սահմաններէն դուրս կը տարածուէր մեր գործը:

Ընկերութեան գործերով ծանօթացայ երկու անձերու հետ. առաջինն էր Մարգար Վարժապետը, երկրորդը Ա...: Մարգար Վարժապետ ծածկամիտ, սակաւախօս ու հեռատես մարդ մըն էր որ Պօլսէն եկած էր: Ա... անձնուէր, գործունեայ մարդ մը: Այս երկուքը մեր շարժումին առանցքը, մտաւոր ուժը կը կազմէին. անոնց շնորհիւն էր որ պարզ գիւղական կռիւներէ վեր՝ Ազգին խնդիրներովն ըզբաղիլ կ'ուզէինք: Անոնք զգալ տուին մեզի, թէ Հայրենիքի սահմանը մեր լեռներէն ու ձորերէն շատ անդին էր, թէ մենք պատմութիւն ու վրէժ ունինք որ մեր ժամանակներէն դարերով ետ կ'երթան: Այդ մարդոց խրատներով, յորդորանքներով և ղեկավարութեամբ՝ մեր ընկերութիւնը կը զօրանար, մենք կը կազմակերպուէինք և սկսեր էինք արդէն գաղ-



տագողի թուրքերուն փնաս տալ: Խուճը մը կազմեցինք: Այս խուճըը ամէն տեղ մարդիկ ունէր: Պէտք եղած ժամանակ գիւղացի երիտասարդներ կ'առնէինք հետերնիս: Բայց մշտական ընկերներս էին՝ Արապօ, Խուլիեցի Առաքել, Սասունցի Գրգօ (Շաքէի էրիկը) և Լևոն: Մեր մէջ դպրոցականը միայն Լևոնն էր որ երկու տարի Առաքելոց վանքը կարդացեր էր. պըզտիկ տղայ մըն էր, դեռ շատ մատաղ, վրան կը գուրգուրայինք:

Ընկերներ պէտք եղած ժամանակ իրարու լուր կուտայինք. գիշերանց գիւղերէն դուրս գալով՝ որոշ տեղեր իրար կը գտնէինք: Սուրբ Կարապետու քով աւազակ քուրդ մը սպաննեցինք, ուրիշ քուրդ մըն ալ՝ քաղաքին մօտերը: Մասնիչներու շնորհիւ, կառավարութիւնը կը սկսէր կասկածիլ, բայց որոշ բան մը չէր գիտեր: Այդ միջոցին՝ Մուսա պէկ իր կատաղութիւնը կը թափէր հայերու վրայ. լսեցինք ուէս Օհանի ողջ ողջ վառելը, Կիւլիզարի առևանգումը: Որոշեցինք Մուսա պէկը սպաննել: Երեք անգամ գացինք, չի յաջողեցանք. գիւղին վրայ յարձակելու չափ ոյժ չունէինք, ճամբուն վրայ, գիւղէն դուրս տեղ մը, իրեն չի կրցանք հանդիպիլ: Լրտես վաճառական մը ունէինք ընկեր, տեսակ մը շրջուն փերեզակ որ պէկին ուր տեղ երթալը պիտի իմացնէր. ան ալ շատ աշխատեցաւ՝ չի կրցաւ: Այդ օրերը, Մուսա պէկ Պօլիս գնաց: Հայերու յուզումը կը շատնար: Տարօն մտաւ Սարկաւազ Յակօր: Սարկաւազը յուզումը շատցուց. գնաց քարոզեց, համոզեց, գիւղացիները իրարու քով բերաւ, մեր կազմակերպութիւնը երթալով կ'ընդարձակուէր: Կառավարութիւնը հայ մասնիչներէ լսեց Սարկաւազին գործերը. հրաման ելաւ Սարկաւազը բռնելու:

Արտօնք գիւղացիները հարսանիքի կ'երթան, քրդերը կը մտածեն թէ՛ Սարկաւազն է որ՝ հարսի հանդերձով ծպտուած՝ տեղ կ'երթայ և կ'ուզեն հարսը տանիլ, հայերը կը դիմադրեն: Կուրի ժամանակ, Հասրաթ անուն հայը կը սպաննուի, ուրիշ գիւղացիներ ու քրդեր ալ կը հասնին, երկու քուրդ կը ըսպաննուին: Հայերը կը յաջողին հարսը գետէն անցընելով ազատել: Լուր կ'երթայ Մուշ, Ա. . կ'իմանայ. ինձ լուր տուաւ, անմիջապէս մարդ մը դրկեցի վարդենիս: Կին, աղջիկ կը փախչին. քիչ վերջ զօրքեր, երեք թնդանօթով, կը պաշարեն վարդենիս, կը ձերբակալուին 50-60 մարդ:

Այս ամէնը լսեցինք մեր ընկերներէն. տեսանք որ կարգը մեզի կուգայ: Դրութիւնը շատ անորոշ էր. խորհրդակցութիւն մը ընելու համար Սուրբ Կարապետ հաւաքուեցանք: 1891ի ամառն էր: Վանքէն դուրս՝ անտառին ծառերուն մէջ պահուած տաղաւարի մը տակ իրար գտանք: Հոն էին քաղաքէն ընկերներ, վարդենեացի երիտասարդներ. մեզ ծանօթացուցին նաև ուրիշ տեղացի ուխտաւորներու: Քըղեցի ուխտաւորներ իրենց հետ բերեր էին Դերձանցի Կարապետ անուն երիտասարդ մը, զոր՝ ընկերներու ստիպումով՝ խուճըին մէջ առինք: Այդ Կարապետն էր որ քիչ վերջ մեր խուճըը մատնեց:

Սուրբ Կարապետէն ինձ յանձնեցին ուսուսհայ մը, Արշակ անունով, զոր առաջնորդեցի դաշտէն անդին. ետ դարձած ատենս՝ լերան ճամբով եկայ, ծանօթի մը գեղը գացի, հոն լսեցի թէ՛ ընկերներէս Արապօ, Միսաք, Մանուկ ու Դանիէլ ձերբակալուեր են: Գիւղը մնալ անկարելի էր. ձին հեծայ: Քիչ մը անդին կանգ առի, զգացի վիճակիս ծանրութիւնը, — Ընկերներ չի կային, ոստիկաններ զիս կը փնտռէ-

ին. ո՞ւր երթամ, կարծեցի թէ աշխարհի մէջ միս մինակ՝ ա՛լ մէկը չունիմ. ձիս ալ դժուարութիւն էր, մտածեցի՝ ի՞նչպէս հետս տանիմ լեռնային քարուտ տեղեր: Վար իջայ: Կենդանիին գլուխը դէպի դաշտը դարձուցի, քանի մը փայտի հարուածով՝ դէպի վարքեցի. ա՛ն ալ գնաց, հեռացաւ, ըսի՝ թո՛ղ մտածեն թէ ձիուն տէրը սպաննուեր կամ գետը խեղդուեր է:

Երեք օր անօթի թափառեցայ լեռը. վերջապէս հայ կին մը հանդիպեցաւ, վստահեցայ կնկան, ով ըլլաւ ըսի իրեն: Կտրիճ կինը Մուշ գնաց, լուր բերաւ: Գիշերը գաղտնի քաղաք մտայ:

Խոր մտածումներու մէջ էր Ա... Զիս տեսնելուն ուրախացաւ, բայց շատ տխուր էր:

— Ամէն բան պատմեր է մասնիչը, հիմա մեր բոլոր գաղտնիքը գիտեն, ըսաւ: Իր անձին վտանգէն աւելի՝ գործին վրայ կը մտածէր: Ինծի խորհուրդ տուաւ որ ուրիշ կողմ մը երթամ, սակայն ո՞ւր պէտք էր երթալ: Լսեցի թէ Լեռնը թուրքեր բռներ են, գէնքերը առեր են վրայէն և թողուցեր են, տղան ամչնալուն իննուս փախեր է: Գացի իննուս, Լեռնը փնտռեցի չի գտայ: Գիւղացիի մը տունն էի, տեսայ որ ինձմէ գաղտնի բան մը կը պահեն, հարցուցի, թէ ի՞նչ կայ. կասկածով երեսս նայեցան. մէկ ալ ներս բերին Լեռնը. տղան ամչնալուն լացաւ, գէնքերը իմս էին, կը վախնայ եղեր թէ իրեն պիտի թշնամանամ, զիրար համբուրեցինք, ես ալ լացի:

Լեռնին հետ հաշտուած ճամբայ ելանք դէպի Ռուսաստան: Իկտիրէն գէնք պիտի բերէինք: Ուրիշ խումբ մը սահմանագլխին մօտերը կռիւ ըրեր էր. ճամբան գոց էր. բարեկամներու խորհուրդով՝ ես դարձանք:

Աս անգամ, մեր գիւղը գացի: Գիշերը տուն մըտնելու ժամանակ՝ շունը հաչեց: Դրացի կին մը կար, օր մը՝ իր անբարոյական ընթացքին համար՝ այդ կինը ծեծեր եմ, կինը կը լսէ շանը հաչիւնը, հին վրէժը լուծելու համար լուր կուտայ սիրահարին, գիշերանց Մուշ կ'իմացնեն իմ ետ դառնալս:

Ընտանիքս ուրախութեան մէջ էր, հոն էր աներըս, առաւօտուն՝ չլուսցած՝ ճամբայ պիտի ելլէի. կինըս հաց կ'եփէր, պզտիկ աղջիկս գերկս նստած էր, ցած ձայնով կը խօսէինք. յանկարծ դրսէն փողի ձայնը հնչեց:

Վեր ցատկեցի, հրացանս վար առի, մայրս վազեց դուռը գոցեց:

— Քու ըրածդ քաջութիւն չէ, մեզ ամենքս կըրակի կուտաս, պոռաց աներս:

Պզտիկ աղջիկս ոտքերուս առջև ձգեցին, մայրս, կինս սկսան լալ: Թուլցան թևերս:

— Նէ՛ իսթիյօրսըն, պոռացի դռնէն:

— Միսօ՛, թէսլի՛մ օլ:

— Տէ՛ յի՛մ, եթէ յանձնուիմ, տանս ի՞նչ կ'ընէք:

Հարիւրապետը երգում ըրաւ որ մէկուն փասս մը չի հասնիր:

Գիւղապետին ներկայութեամբ՝ անձնատուր եղայ:

Ներս մտան, հաւաքեցին գէնքերս, կտորացին սնտուկ, փեթակ, աներս փեթակէն դուրս հանեցին ծեծեցին: Չեռքերս ոտքերս կապուած՝ կը տեսնեմ այս ամէնը:

— Տէ՛ յի՛մ, ա՞ս էր խոստումդ:

Զինուորները եկան պեխերս, մազերս քաշեցին, ծեծելով հրմշակելով քաղաք տարին:

Մշու բանալը երկար չմնացի: Պիթլիս տարին:

— Արապօն, Մարգար Վարժապետը, Խարախանեանը կը ճանչնա՞ս հարցուցին:

Ուրացայ :

— Գլխաւորներդ ձեռք տո՛ւր , քեզ կ'ազատենք , քեզի պաշտօն , ամսական , շքանշան , հրացան կուտանք :

Խոստումները օգուտ չըրին : Հազարապետը փայտով զարկաւ , գետին ինկայ ուշաթափ , կրկին ծեծեցին : Վերջին գիշերուան չարչարանքէն դեռ տկար , առտուն կանուխ հանեցին , ձեռներս ձեռնակապ դըրին , ձիերու առջևէն զիս վազցնելով ճամբայ հանեցին դէպի Մուշ :

Օղը ցուրտ էր , գետինը խորունկ ձիւն կար , անօթի ու կապուած չէի կրնար վազել , ետևէս կը զարնէին , կը հայհոյէին , կը ծաղրէին :

— Արագ շարժէ՛ , անհաւատ չուն :

Այսպէս դժոխային չարչարանքներով Ավզատ հասանք : Ավզատ քրթու գիւղ մըն է , միայն երկու տուն հայ կայ : Ռէսին տունը իջանք , մեռելի պէս գետին ինկայ յոգնութենէս :

Օճախը մեծ կրակ մը վառեցին , ոստիկանները չորս կողմը շարուեցան :

— Սա՛ շանը ձեռնակապը քակեցէ՛ք , թո՛ղ ոտքերը չորցնէ , վաղը ճամբան կը սաստկի , ըսաւ հարկւրապետը :

Ձեռնակապերս քակեցին . հանդարտեցայ : Հրացանները օճախին վրայ կախեր էին . անոնց մէջ էր նաև իմ հրացանս : Հրացանիս տեսքը զիս խռովեց , բարկութենէս դողալ սկսայ , ցերեկուան կերած ծեծըս , լսած նախատինքս յիշեցի , կարծես ներքին անդիմադրելի ուժ է մը մղուած՝ վեր ցատկեցի , հրացանը խլեցի և դուրս նետուեցայ :

— Ես մահ կ'ուզեմ , ո՛վ որ մահ կ'ուզէ՝ թո՛ղ ետևէս գայ :

Հարկւրապետը դրան մէջ զիս բռնեց , ետ դարձայ , հրացանի կոթով հատ մը իջայ գլխուն , վար ինկաւ , հրացանիս փողը դէպի ներս դարձուցի :

— Մի՛ շարժիք , կը զարնե՛մ :

Գիշ մը ետ ետ քալեցի . մէկը տեղէն չշարժեցաւ . գիւղէն դուրս վազեցի : Գիւղը իրար խառնուեցաւ , քրդերը աներէն դուրս խուժեցին : Փողը հնչեց , շքաները կը հաչէին , ոստիկանները կը պոռային : Ինքզինքս քարի մը ետև նետեցի : Ոստիկանները և քրդերը բոլորախիս շղթայ մը կազմեցին , բարեբաղդաբար մուծին մէջ լաւ չէին տեսներ . զիս պաշարողներու մէջտեղէն ճամբայ մը տեսայ , դէպի վար սողացի պարապ միջոցէն առանց տեսնուելու դուրս ելայ , առու մը կար , ջուրին մէջէն քալեցի հեռքս կորսնցնելու համար , շրջան մը գծելէ վերջ , բլուրի մը վրայ բարձրացայ : Գազաթը նստած լսեցի հալածողներուս աղմուկը : Յանկարծ պոռացին .

— Զարկա՛ւ , զարկա՛ւ . . .

Գրդուն մէկը քարէն վար ինկեր էր , խորհեր են թէ դեռ ան քարին ետև եմ և մարդը սպաններ եմ : Կամաց կամաց ձայները լռեցին :

Ատեն մը նստած՝ մտածեցի : Դեկտեմբերի ցուրտ գիշեր մըն էր՝ խաւարը անթափանցելի , տեղը անծանօթ . ճամբայ ելայ դէպի դաշտը , առջևս ձոր մը բացուեցաւ , ձորէն վար քալեցի , մացառները ճամբաս գոցեցին . թմրած ոտքերս ա՛լ առաջ չէին երթար , ուժս հատեր էր , գետին ինկայ : Լացի :

— Թո՛ղ վայրի գազանները ուտեն զիս , ըսի : Յոգնութենէս քնացայ : Երբ արթնայ՝ դեռ գիշեր էր : Ո՛չ ոտք , ո՛չ ձեռք կրնայի շարժել , թեևս մարմնոյս շփեցի , կէս սողալով , կէս գլորելով քիչ մը տեղ շարժեցայ , թմրած անգամներս տաքցան : Կրկին քա-

438 - 2012



լել սկսայ: Հեռուն տուն մը տեսայ, մօտեցայ որ Մուսա Պէկին մէկ ամառանոց քէօղին է, դռները ամուր փակուած, պատուհանները վանդակապատ. չորս կողմը դարձայ, ներս մտնելու հնար չի կար: Ճամբաս շարունակեցի: Ջաղաց մը գտայ, ներսէն ձայն կուգար, ուզեցի ներս մտնել, վախցայ, առաջ քալեցի նորէն: Շուներու հաչիւն լսեցի, գիւղի մը կը մօտենայի: Չորս կողմս դիտեցի, տեսայ որ ձորակի մը մէջն եմ, և այդ նոյն ձորակն էր ուսկից փախեր էի: Ամբողջ գիշերը քալելով հին տեղը դարձեր էի: Լուսնալու մօտ էր: Այս անգամ ձորակէն դէպի վար՝ ջրին հետ քալեցի. ջուրը գետը կ'երթայ՝ մտածեցի, անգամ մը որ գետը հասնիմ՝ ճամբայ կը գըտնեմ: Լուսցեր էր, գետը հասայ, ջրէն անցայ, սառ ջուրը ոսկորներս քամեց, աչքերս կարծես դուրս կուգային, իրերը կը մթննային, սողալով, ինքզինքս քաշելով առաջ գացի: Գիւղը կ'երևէր արդէն. ծունկերուս վրայ կը քալէի: Գիւղը հասայ, բարեկամի մը դուռն եմ:

— Սիրակա՛ն...

— Տղա՛ք, Մխօի ձայնն է...

Մարեցայ, բան մը չեմ յիշեր, միայն յաջորդ առտուն ձայն մը լսեցի, աչքերս բացի.

— Ամա՛ն, ոտքերս...

Պառաւ բժիշկ մը բերին, զիս փաթթեցին, տաք աղբի մէջ դրին: Քանի մը օրէն բաւական աղէկացայ: Կրկին հնչեց փողը Վարդենիսի մէջ, զօրքերը գիւղը պաշարեցին:

— Քու պատճառով՝ մեր գիւղն աւերեցին, եկաւ լուր բերաւ մէկը:

Բարեկամներս շուարեցան, չեն գիտեր ի՛նչ ընեն:

— Ինձի 60-70 Փշանկ բերէ՛ք, զիս գիւղէն դուրս հանեցէք...

— Գնա՛... .

— Մի՛ երթար...

Փամփուշաները առի, հրացանը ձեռքս՝ դէզերու մէջէն՝ գեղէն դուրս ելայ:

Կրկին թափառական՝ գիւղէ գիւղ քալեցի, տեղ մը ապաստան չի կար, ամենքը՝ զիս տեսնելուն՝ կը սարսափէին:

Գիշերը բարեկամի մը տուն հասայ, դուռը զարկի, մարդը դուռը բացաւ:

— Շու՛տ ճրագը մարէ՛, ներս գնա՛, ըսէ՛ մարդ չի կայ, գնա՛ տեղ մը պատրաստէ, մարդու չըսե՛ս:

Քանի մը բոպէէն՝ ոչսն ալ հետը՝ եկան, ոչսը ճակատս համբուրեց:

— Ես քեզի ըսի որ մարդու չըսես, հիմա ամբողջ գիւղը պիտի լսէ:

— Ես գիւղը կրակի կուտամ՝ քեզ ձեռք չեմ տար, վստահացուց ոչսը:

Հովիւի թաղիքով ծպտեալ՝ տուն մը տարին զիս, գիւղին մէջտեղ, մառանի մը մէջ պահեցին, կին մըն ալ պահապան դրին վրաս:

Տեղս անապահով էր, կ'ուզէի փախչիլ, դրան ետև՝ մթնալուն կը սպասէի, ոչսը եկաւ:

— Ո՛ւր կ'երթաս, հարցուց:

— Կ'երթամ, անկարելի է հոս մնալ:

Հաւանեցան որ երթամ: Ընկերոջ մը հետ ուրիշ գիւղ մը գացինք: Ես գիւղէն դուրս սպասեցի, ընկերս զրկեցի որ բարեկամներուս լուր տայ: Գիւղը զօրք կար, գաղտնի ճամբով գոմ մը գացի:

Մակար բարեկամս ախոռին մէջէն դէպի ցորենի հորը ծակ մը բացեր էր փորելով, հորին մէջ անկողին դրեր էր. գաղտնի ճամբով հորը մտայ, երկու շաբաթ հոն պառկեցայ, ոտքերս աղէկնալ սկսան:

Չօրքերը զիս փնտռել եկան գիւղը, Մակարի հօրեղբայրը այնքան ծեծեցին որ մարեցաւ: Մարդուն կինը ինձի և զիս պահողներուն հայհոյեր է: Մակարը լուր բերաւ. Մակարի մայրն ու կինը վախերնէն կուլային:

— Մակա՛ր, ճամբայ մը գտիր, ուրիշ գեղ մը երթամ:

Մակար հետս դուրս եկաւ, վերջը ճամբէն ետ փախաւ:

Ուրիշ գիւղ մը մտայ:

— Ալէքսանը ո՞ւր է, հարցուցի:

— Գինով է, խմեր է, ինքզինքը չի գիտեր:

Թուրքին վախէն՝ մէկը զիս չէ՛ր ճանչնար, ուրիշ մը գինով կը ձեռնար:

Քեռուս գեղը գացի ծուռ ու մուռ ճամբաներով. տունը մտայ. քեռիս ճակատս համբուրեց:

— Տեսա՞ր զաւակս, անձնատուր ըլլալով թէ՛ դուն. սաղատեցար և թէ մենք, ըսաւ քեռիս:

Քեռանքս ամէն խնամք տարին, սակայն զի պահելը գրեթէ անկարելի էր, հոն ալ սպահովութիւն չի մնաց: Գացի խնամոնց տունը:

Հոն թաքստոց մը պատրաստեր էին ախոռը, մըսուրին ետև՝ պատին մէջ, գերեզմանի պէս տեղ մը բացեր էին որուն առջևի կողմը քարով կը գոցուէր:

Երկու օր պատին մէջ պառկելէ վերջ, գիւղը դարձայ: Ձիս մատնողը սպաննել կ'ուզէի. դէռ չէի գիտեր թէ դրացի կնոջ սիրահարն է թշնամիս. գիւղին ռէսը պիտի սպաննէի, կը մտածէի թէ ան էր մատնիչը:

Գիւղին մէջ շունը վրաս հասաւ, ծանօթ մը դուրս եկաւ, զիս ճանչցաւ:

— Ռէսը քեզ չէ՛ մատներ, մատնողը յայտնի չէ՛ զիս համոզեց մարդը:

Տուն գացի, ընտանիքիս հետ տեսնուեցայ: Քուրդ աշիրէթի մը պետը լուր դրկեր էր որ իր քով երթամ, կը խոստանար որ զիս պաշտպանէ:

Քրդու քով ապաստանելու մտածումը սիրելի չեղեցաւ ինձի, որոշեցի Սասուն երթալ: Ետ դարձայ մսուրի թագստոցը. երեք օր բուք եղաւ, անկարելի էր ճամբայ ելլել, չորրորդ օրը գոմը պաշարեցին:

Պատին մէջէն կը լսէի դրսի աղմուկը, ներս մըսան, զինուորները տան աէրը բռնեցին:

— Քեզ կը սպաննենք, մարդուն տեղը ըսէ՛:

Ձիս պահողը պառկեցուցին, չարչարեցին, դանակը կոկորդին գրին:

— Թողէ՛ք ըսեմ, գաղտնի կ'ըսեմ:

Իմացայ որ ա՛լ ամէն բան լինցաւ:

Ձինուորները դէպի պատը եկան:

— Մի՛ շարժիր, կը սպաննենք, պոռացին:

Քարը վար ձգեցի, դուրս եկայ պատէն:

Բոլորը վրաս թափեցան. անզէն էի, անխնայ ծեծեցին:

Երեք շաբաթ էր անցեր փախչելէս վերջ, այնքան տառապանք, դժուարութիւն պարապ անցեր էին: Ազատութեանս Ձարդ օրը կրկին բռնուեր էի:

Ճանապարհին՝ տեսայ որ գիւղին քահանան ալ բռներ են իբր թէ ան է պահեր հրացանս:

— Մարդը անմեղ է, թո՛ղ տուէք ըսի:

— Հրացանդ ցոյց տուր, մարդը կ'ազատենք, ըսաւ հարիւրապետը:

Հրացանս տունը պահեր էի, մարդ դրկեցինք, հրացանը բերաւ, ոսկի մը կաշառքով քահանան թողուցին:

Ձիս մեր գիւղը տարին, տեսայ որ եղբայրս ալ բռներ են կը ծեծեն: Կապուած բան մը չէի կրնար

ընել, կատաղութենէս հայհոյեցի: Ձիս ալ ծեծեցին: Գիւղին մէջ ծեծ ու լաց, աղաղակ ու ճիչ իրար խառնըւեր էին, կին, մայր, զաւակ, ազգական ամենքը խենթի պէս կ'ողբային: Անգթութեան շափ չի կար: Ձիս քաղաք տարին, խուճերով ձիւտորներ մեզ դիմաւորեցին: Խոշոր թափոր մը կազմուեցաւ, ես ամենուն կեդրոնը, չորս կողմս երեք կարգ զօրք շարուած՝ հանդէսով քաղաք մտանք: Փողոցները խռնըւած էին, բայց մէկ հայ չէր երևեր: Թուրք ամբոխը անէծք ու հայհոյանք կը տեղար վրաս, կիները տանիքներէն ձիւն ու թուք կը նետէին վար Փորձեցին զիս զինուորներու ձեռքէն խլելով սպաննել, սակայն չյաջողեցան:

Երբոր բանտ հասանք, առաջին գործերնին եղաւ դարբին մը կանչել և ամենէն ծանր շղթան վիզս ու ոտքս անցնել. շղթան այնքան ծանր էր որ ոչ կըրնայի նստիլ ոչ ալ շարժիլ:

Բանտապահ զօրքերը վրաս կը խնդային:

— Հիմա խելքդ գլուխդ եկա՞ւ, կ'ըսէին:

Բանտին մէջ իմացայ որ քեռուս տղան զիս մատներ է՝ չարչարանքի տակ:

Բանտակից թուրքեր հետս շատ գէշ կը վարուէին, ծանր շղթային տակ գալարուելս տեսնելով կը զուարճանային: Երեք հայեր կային հոն, անոնք ալ կուլային:

Երեք օր դիմացայ, չորրորդ օրը ուժս հատաւ, ա'լ յուսակաւոր՝ ինքզինքս խեղդելու վրայ մտածեցի, եթէ ոտքով շղթան ձիգ մը քաշեմ՝ վզիս օղակով կը խեղդուիմ, կ'ըսէի: Այդ ժամանակ, միաքս բան մը ինկաւ, չարչարանքէ ազատելու համար՝ մէկուն անունը տամ, ըսի: Կանչեցի բանտապահը:

— Շղթաս հանեցէք, զիս պահողը ըսեմ:

Հանեցին:

— Սա՞ն աղան էր որ զիս պահեց, հանդերձներս անոր քոյն են, ասկէ առաջ ես ցորենի մեքենայ կը բանեցնէի, ան ժամանակէն կը ճանչնամ Սասո աղան:

Երկու օրէն քուրդը բերին:

Յայտնի էր որ Սասո աղան պիտի ըսէր թէ զիս չի ճանչնար: Բայց ինչ որ է, կը մտածէի, թէ գոնէ ժամանակ մը կը հանգչիմ:

Ձիս սենեակ մը տարին, եօթը քուրդ մէկտեղ կեցուցեր էին:

— Ո՞րն է Սասո աղան, հարցուցին:

Աղայի նմանող մէկը ցոյց տուի:

— Վա՛յ անհաւատ շուն, պոռաց հազարապետը, դուն կառավարութիւնը կը խաբես, ատ չէ՛ Սասո աղան, ա՛ս է՛:

— Խիղճս չի թողուց որ շիտակը ըսէի:

— Հերի՛ք եղաւ, անկրօն խո՛ղ, ըսաւ հազարապետը, ու քանի մը հարուած իջաւ գլխուս:

Հարցաքննութիւնը շարունակեցին:

— Ո՞ւսկից կը ճանչնաս աս մարդը:

Մեքենայի պատմութիւնը կրկնեցի: Սասո աղան առաջ քաշեցին, սկսան ծեծել:

— Շիտակը ըսէ՛:

Խեղճ քուրդը ծեծին տակ սկսաւ ինձ աղաչել:

— Աստճո՛ւ սիրուն, ես քեզ ե՛րբ տեսայ:

— Ես ի՞նչ ընեմ, Սասո աղա, դուն ինձի բարեւ ըրի՛ր:

Քուրդը բաւական չարչարելէ վերջ՝ տեսան որ բանէ լուր չունի, կաշառք առնելով թողուցին:

Ձիս փոխադրեցին ուրիշ բանտ մը. այնտեղէն կաշառքով յարաբերութեան մտայ ընկերներու հետ: Տղաքը պատը ծակեր էին, բանտէն ընկերները կը

պատրաստուէին փախչելու, ինծի ալ լուր տուին, դուրսէն խարտոց պիտի զրկէին որ շղթանիս կարենք, շատ յոյս չունէի, որովհետեւ իմինս շատ ծանր ու հաստ էր, խորհեցայ որ կաշառքով շղթաս փոխել տամ: Այս խորհուրդներուն մէջ՝ հեռագրով զիս Պիթլիս կանչեցին:

Իմ մեկնելէս վերջ, ընկերներէն մէկը կը մատնէ միւսները, կը գտնեն ծակը, նոր շղթաներ կը դնեն բանտարկեալներուն վրայ:

Պիթլիսի մէջ նոր մատնութիւններ եղեր էին: Մուշաղչէնցի Գասպարը շատ մը բաներ յայտնէր էր, անոր համար զիս արտորնօք Պիթլիս տարին:

Շատ հարցաքննութիւններ ըրին, աշխատեցան վրաս մարդասպանութեան ոճիր մը բեռնել, չյաջողեցան: Կամաց կամաց տեսակ մը փաստաբան կը դառնայի:

Այդ միջոցին կաթոլիկ հայ մը մեր տունը կ'երթայ, մօրս կ'ըսէ, թէ քսան ոսկիով աղադ կ'ազատեմ:

— Հինգ ոսկի ունիմ, ես ուսկից կրնամ փոխ առնել, կ'ըսէ մայրս:

— Հինգ ոսկին տուէք, մնացածին համար անական կահ կարասիք տուէք՝ ինչ որ ունիք:

Մարդը հինգ ոսկին և տանը մէջ ինչ որ տանելու արժանի բան մը կայ ժողվելով կ'անհետանայ:

Մայրս երբ կ'իմանայ խարուիլը, Մուշ՝ Առաջնորդարան կը դիմէ, կառավարութիւնը հոս հոն խառնութեաններէ ետ կը բերէ ապրանքը. հինգ ոսկին մարդուն հետ կորսուեր էր:

Պիթլիսու բանաը Մուսա պէկի մարդոց մէկը կար, կատաղի քուրդ մը՝ Ալի պէկ անուն զազան մը, ուսկից ամէն մարդ կը սարսափէր. կ'ըսէին թէ

բանաին մէջ մարդ ալ խեղդեր է, զիս դիտմամբ անոր սենեակը քշեցին:

— Ս'ա քեզի մէկ ընծայ, Ալի պէկ, ըսին, ու զիս ներս հրեցին:

Ներսի քրդերը նոր որս մը գտնելու հաճոյքով սկսան ծափ զարնել:

— Աս ո՞վ է, հարցուց Ալի պէկ:

— Տէր Գէվանուց Մխօն է, ըսաւ բանտապահը:

Պէկը ոտքի ելաւ նստած տեղէն, եկաւ ճակատս համբուրեց: Ես շուարեցայ:

— Կտրի՛ճ, դուն իմ եղբայրն ես, եկուր նստէ՛ք զովս:

Առօք փառօք բազմեցուցին զիս անկողնին վրայ:

— Ո՞վ որ ասոր մէկ մազին դպչի անոր... Յետոյ խօսքը ինծի ուղղելով՝

— Դու ինչպէս ան իսքէնտէր շունը չստակեցուցիր, հրացանի կոթին տեղ դանակով զարնէիր:

Իմացայ որ Ալի պէկը ձերբակալողը իսքէնտէրն է եղեր, ան իսքէնտէրը, որուն ձեռքէն փախեր էի, որուն պաշտօնանկ ըլլալուն պատճառ դարձեր էի, ասոր համար քուրդ պէկը զիս այնքան կը շոյէր:

Քրդերը բարեկամ եղան, կոչունք կար ամէն օր, պատիւը անպակաս էր:

Բանտէն լսեցի, թէ կաթոլիկ հայը բռնուեր է, քրդերուն պատմեցի եղածը, խրատեցին որ աղերսագիր մը տամ: Դիմեցի ընդահունը դատախազին, կաթոլիկը հարցաքննեցին, ուրացաւ, բայց իրողութիւնը հասկնալով՝ մարդը Մուշ զրկեցին. հոն դըրամը առնելով մօրս դարձուցին:

Աս անգամ հարցաքննութիւններս շատ մանրամասն էին: Զիս երբ երես երեսի բերին մատնիչ Գասպար էֆ. ի հետ՝

— Աս մարդը կը ճանչնա՞ս, հարցուց դատաւորը :

— Ո՛չ, ըսաւ մատնիչը :

— Գրագի՛ր, կարդա՛ սս մարդուն ըսածը, հրամայեց դատաւորը :

— Աս իմ ըսածս չէ՛, զիս պէտք է ազատ թողուք, իսկ եթէ հինգ տարի պատիժ կուտաք, ես մեռած մարդ կը սեպուիմ և մեռածին վկայութիւնը չընդունուիր, փաստարանեց Գասպար էֆէնտին :

— Աճմէս աղա, հոս եկուր, նշան ըրաւ դատաւորը :

Յիմարի երևոյթով տաճիկ մը առաջ քալեց, ըսկըսաւ իմ մասիս խօսիլ :

— Աս մարդը իրաւ յանցանք գործեր է, երիտասարդութիւն է ըրեր :

— Ա՞ս է իմ փաստաբանս, ես այդ տեսակ փաստաբան չեմ ընդունիր, պողոսցի ու անդէս կայնեցայ :

Ձիս հրելով նստեցուցին :

Փաստաբանս շարունակեց ձեակերպութիւնը :

Դատաւորները առանձնացան դուրս եկան, տասնըհինգ տարուայ բանտարգելութեան վճիռ բերին :

Դատավճիռը վրաս չազդեց : Բանտին մէջ հայ մը կար, հինգ տարուան դատապարտեր էին, մարդը ցաւէն ո՛չ կ'ուտէր, ո՛չ կը խմէր : Մենք քրդերուն հետ ուրախութիւն կ'ընէինք :

— Աստուած քեզի խելք տայ, ցասնըհինգ տարի առեր է՝ նորէն կը խնդայ, կ'ըսէր լալկան մարդը :

Քրդերը բանտը ծակելու փորձ կ'ընէին, խորունկ ծակ մը բացեր էին. գիշերը անկողնին տակ կը փորէինք, գետնէն ելած հողը գրպանով արտաքնոց կը տանէինք. փորեցինք մինչև պատին հիմը հասանք, որ կողմ կը դառնայինք ապառաժ կար առջևնիս, ա՛լ առաջ երթալ անկարելի էր : Ծակէն յուսահատ՝ առաստաղը կարել աշխատեցանք :

Հրաման եկաւ որ Պօլիս փոխադրեն զիս ուրիշներու հետ : Ալի պէկ չուզեց զիս տալ, սպառնալիք ըրաւ, բանտապետը եկաւ աղաչեց :

— Ո՛չ, անկարելի է, վալին գայ՝ չե՛մ տար :

Նոր նոր պաշտօնեաներ կուգային պէկը համոզելու, «Թագաւորի հրաման է, կըսէին, մտիկ չընել չըլլա՛ր» : Ալի պէկ քանի մը օր յամառեցաւ, վերջապէս համոզեցին, թողուց որ սենեակէն հանեն :

Քրդերէն զատուիլ տխուր էր, իրար համբուրեցինք. որքան որ հոն կեցեր էի՝ լեռնցիները ինձ ամէն տեսակ խնամք տարեր էին, ամէն կերպ աշխատներ էին ինձ համար : Անգամ մըն ալ իրար տեսնելու յոյսը չունէինք, իրարմէ բաժնուեցանք յաւիտեան :

Ճամբու ընկերներ, շղթայակիցներ, եօթը հոգի էինք, ամենքս մէկ շղթայով իրարու կապուած : Մեզի կ'ընկերանային 40 հեծելազօրք և 40 հետևակ : Իրար քաշելով, իրարու վրայ իյնալով՝ սկսանք անվերջ ճամբան դէպի Տրապիզոն : Մեր երկրին սահմաններէն դուրս հանեցին մեզի, ծանօթ տեսարանները փոխուեցան, մեր ետև մնացեր էին ազգական, սիրելի, յոյս, երջանկութիւն, շղթայէն գատ ուրիշ բան մը չունէինք, զինուորներու հարուածով վիրաւոր՝ ոտքերնիս իրար խառնուած՝ թշուառ մարդակոյտ մը՝ յառաջ կը գլորուէինք :

Վիճակնիս շատ տխուր էր, բայց չարչարող թըլնամիին առջև մեր տկարութիւնը ցոյց տալ կարիճ Մշեցու անվայել կը սեպէինք : Բանտէ բանտ, գիւղէ գիւղ կ'երթայինք նոյն յամառ տոկունութեամբ : Իրիկունները երբ հայ գիւղեր իջեանէինք, որքան ալ յոգնած ըլլայինք՝ նորէն բոլորս մէկտեղ կը պարէինք ու կ'երգէինք :

— Ասոնք կախաղանի կ'երթան, չեն վախնար, կ'ըսէին թուրքերը :



Տրապիզոն քանի մը օր պահեցին: Բանտը բարձր պատուհան մը ունէր, խորհեցանք դրսէն կտաւ բերել տալ, չուան շինել՝ փախչիլ: Հանդերձի համար կտաւ գնեցինք, բանտապետը կասկածեցաւ կտաւը ետ տարաւ:

Երեք ամիս ու կէս մնացի Պօլսոյ բանտը: Այն տեղէն ալ Աքքեա տարին:

Պարսպապատ բերդ մըն էր Աքքեա: Բանտը՝ աղտոտ ու խռնուած: Հոն արդէն 50էն աւելի հայ քաղաքական յանցաւորներ կային:

Բանտապետը մեզի՝ նորեկներուս՝ հաց չտուաւ. մէկ քանի օր անօթի մնացինք, արդէն դրամ չունէինք, խնդրեցինք որ մեզի ալ օրական բաժինէն սան, մարդիկը կ'ուզէին հաց ծախել մեզի:

Ընկերներս անօթի կը չարչարուէին, տեսնելով որ արաչանքը ճար չընէր՝ ըսի մերիններուն որ առաւօտուն պատրաստուին հաց խլելու: Միւս օր սովորական ժամուն բանտին սպասաւորները զամբիւղով հաց բերին բակը և սկսան բաժնել: Առանց բան մը ըսելու զամբիւղը խլեցի, հացը նետեցի ընկերներուս: Բանտապահները վրաս թափուեցան, չարաչար ծեծեցին զիս, ուշաթափ գետին ինկեր էի. բարեբաղդաբար հայ բանտարկեալ մը, որ աղղեցիկ ու հարուստ մարդ մըն էր, օգնութեան եկաւ.

— Անօրէններ, մարդ կը սպաննէք...

Հայը՝ զայրացած՝ հայհոյեց բանտապետին ալ, կառավարութեան ալ, Մուհամմէտին ալ, գնաց գանդատեցաւ Մութաարիֆին: Զիս քննութեան տարին, լաթերս հանելով կռնակս ցոյց տուի, ամբողջ մարմինս կապուացեր էր, քանի մը օր հիւանդ պառկեցայ, սակայն այդ ծեծին չնորհիւ՝ մեզի ալ միւսներուն պէս հաց տուին: Բայց իմ ընկերներս փոխա-

նակ երախտագիտութիւն ցոյց տալու, հետս չարացան:

Բանտին մէջ ծանօթացայ ծանկիւլեանի, Տօնապետեանի, Մարիմեանի և ուրիշներու: Տեսայ թէ ո՞րքան անտեղեակ եմ իմ օրով կատարուած դէպքերուն: Գաղտնի միջոցներով դրսէն նամակ, լուր և թերթ կը ստանային ծանօթներս: Ամենուս մտածումի առարկան մեր երկիրն էր, մէկ յոյս մը ունէինք ան ալ՝ հայկական դատի լուծումով՝ ազատութիւն գտնելն էր: Բանտը ինձ դպրոց եղաւ, հոն սորվեցայ կարդալ-գրել. առաջին անգամ հոն ըմբռնեցի հայկական շարժումին ոգին: Դասատուներս յեղափոխականներ էին, գաղափարի մարդիկ. ես գործի, կռիւի մարդն եղեր էի: Բանտին մէջ հասկցայ թէ ի՞նչքան հզօր է Գաղափարը և թէ ի՞նչպէս ան կրնայ ինձի պէս մարդոց ուժը կրկնապատկել: Մինչև Աքքեա, տեսակ մը բնազդումով գործեր էի: Ազատութեան բնական սէրն ունէի, թշնամին կ'ատէի, ընկերներու համար հոգիս տալու յօժար էի, սակայն Աքքեաի ընկերներս սորվեցուցին ինձի թէ գգացումի հետ մտածում ալ պէտք է, թէ քաջութիւնը միայն բաւական չէ՝ Հայրենիքին ծառայելու, — պէ՛տք է խելքով կազմակերպուիլ:

Դպրոցական կեանքի շատ փափաքող չէի, որքան ալ որ ընկերներս զիս կը զարգացնէին մտքով, կըրկին աչքս դուրսն էր: Պարիսպէն դուրս կը նայէի: Հեռո՞ւն, կապոյտ լեռներու տեսքը հոգիս կը խռովէր, կարծես զիս իրենց կը կանչէին: Քա՛ղցր, շատ քա՛ղցրը կ'երեւէր Ազատութիւնը:

Փախելու վրայ կը մտածէի: Ծանկիւլեանը զիս ծանօթացուց Սուրիացի բանտարկեալներու հետ. կարիճ մարդիկ էին, դուրսը ընկերներ ունէին, կա-

րելի էր անոնց միջոցով ճար մը գտնել: Բանտակիր-ներէս շատ վտանգ կար. մատնիչներ կային որ մեր ամէն շարժումները կը լրտեսէին: Կարապետ Նաթանեանը ամէն բան Մութասարիֆին կ'իմացնէր: Մշեցիներէն ալ վատ մը կար, Մարգար անուն, որ ամենուս կը քծնէր, բան մը լսելուն պէս՝ կ'երթար բանտակետին կը պատմէր: Մէկը կար հոն, ազնիւ հայ մը, ուսկից ամենը կը պատկառէին, այդ մարդն էր իմ պաշտպանս, կարօտութեան ժամանակ՝ օգնականս. երախտագէտ յարգանքով կը յիշեմ իր անունը:

Բանտին մէջ Պետրոս անուն Սիւրբացի մը կար, հետը մտերմացանք:

— Եթէ բանտէն փախչիս՝ Պէյրութի կողմը գնա՛, լերան վրայ Պասսա գիւղը, երբ եղբայրս գտնես, ա՛լ ազատ ես...

Բարեկամս բանտէն ելաւ, ուրիշ Սիւրբացի մը կը ճանչնայի:

— Սէլիմ, ըսի, եթէ ուզես՝ զիս կրնաս ազատել...

Սէլիմ բանտէն ելեր էր, համաձայնեցանք, քանի մը օրէն լուր զրկեց թէ ե՞րբ պատրաստ եմ:

— Վաղը չէ միւս գիշեր, ըսի, կա՛մ մահ, կա՛մ ազատութիւն...

Պատրաստուեցայ ճարահատ փորձին: Որոշուած գիշերը ելայ, ամենը կը քնանային, անձայն տանիքը բարձրացայ, նայեցայ վար իջնելու ճար չի կայ, տանիքը շատ բաճր էր, այդ տանիքէն ուրիշ մը ցատկեցի, անկից ալ ուրիշ մը, վերջինէն ալ փողոց: Քաղաքը պզտիկ տեղ մըն է չորս կողմէն պարսպապատ: Դրան առջև պահապանը կը հսկէր:

Պատին տակէն, շուքերու մէջէն, դէպի դուռը սողացի: Պահապանը կ'երթար, կուգար դրան առջև. աչքովս չափեցի հեռաւորութիւնը, պատրաստուե-

ցայ որ դռնէն ամենէն շատ հեռացած ատեն յանկարծ առաջ նետուիմ և դուրս փախչիմ, սողալով արդէն դրան շատ մօտեցեր էի: Շունչս շատ կամաց կ'առնէի, սիրտս կը տրոփէր. ափերս գետին դրած առաջ նետուելու պատրաստ էի, յանկարծ, պահապանը ետ դարձաւ դէպի պահականոցը, նոր պահապանը եկեր էր, կարգ կը փոխէին: Պահապանները իրարու հետ կը խօսէին, ես ալ՝ չորեքթաթ քայլելով՝ առանց մէկէն տեսնուելու՝ դռնէն դուրս անցայ:

Մութ տեղը քալեցի: Հեռուէն սուլեցին, ես ալ սուլեցի: Սէլիմը և իր հետ մէկը երևցան. Սէլիմ գինով էր, ընկերն ալ կասկածելի, ինձմէ երկու ոսկի ուղեցին:

— Երկու արծաթ ունիմ, ան առէք:

Դրամը առին, ընկերը զիս լերան տակ գիւղ մը տարաւ, սուն մը կեցայ:

Առաւօտուն գիւղացիներն եկան, տեսայ որ շատ բարեկամ չէին երևիր:

— Քու պատճառով Սէլիմը բռներ են, քեզ կառավարութեան պիտի յանձնենք, ըսին: Գիւղացիները միտք ունէին զիս բանտը դարձնելու:

— Կեցէ՛ք ըսի, ես թուղթ մը գրեմ, եթէ Սէլիմ իրաւ վտանգի մէջ է՝ թո՛ղ իմացնէ, այն ատեն զիս քաղաք տարէք յանձնեցէք:

Գիւղացիները դրամի համար զիս կառավարութեան պիտի յանձնէին, սակայն խոստումով, թղթով ժամանակ շահեցայ, երեկոյին ապա մը առի վրաս պարտէզ ելայ, պարտէզին պատէն վար ցատկեցի, ետէս ինկան, անտառը մտայ, հեռուէն վայնասունը փրթաւ, բայց բաւական հեռու էի, ձայներուն հակառակ կողմը փախայ:

Գիշերը ամբողջ քալեցի, ցերեկը պառկեցայ:

Մորմէնի կ'ուտէի: Գիշերը կրկին ճամբայ ելայ, մինչեւ առաւօտ քալեցի. առտուանց երեք զինեալ մարդիկ դէմս ելան, փախայ, ետես ինկան, անտառին մէջ ծակ ծառ մը հանդիպեցաւ մէջը մտայ, աւազակները եկան մօտէս անցան, սակայն զիս չի գտան:

Բանտի բարեկամիս նկարագրած ուղղութեամբը քալեր էի, ա'լ գիւղին մօտեցեր էի: Իրիկուան դէմ երկու լծւոր տեսայ որ եզներով գիւղը կը դառնային, անոնց մօտեցայ:

- Պաստան ա՞ս է, հարցուցի:
- Աս է:
- Այսինչը կը ճանչնա՞ս:
- Կը ճանչնամ:
- Հաց ունի՞ս, կտոր մը հաց տուր:
- Լծւորը քանի մը թուզ ու հաց տուաւ, վրաս ուր ուժ եկաւ, հետերնին դէպի գիւղը քալեցի:
- Դեռ ճամբան էինք, ուրիշ լծւորներ եկան:
- Աս ո՞վ է, հարցուց մէկը:
- Հովիւ է:
- Այդ ի՞նչ խանչար է, հարցուց մարդը ինծի:
- Խանչա՛ր է:
- Տո՛ւր ինծի:
- Չեմ տար, ես միշտ դուրսերն եմ, ինծի պէտք է:

Մարդը ուղեց բռնի առնել, ես չտուի. պիտի կռուէինք, միւսները թող չտուին:

Խանչարին հետ ապահով Պետրոսին տունը հասայ: Պետրոս զիս տեսնելուն՝ ինքնիրմէն ելած՝ վիզս փաթթուեցաւ, կարծես թէ տասը տարուան ընկեր էինք:

Փախչելու մանրամասնութիւնը պատմել սրւաւ, երբ խանչարին պատմութիւնը լսեց, դուրս

վազեց, զիս կողոպտել ուղող մարդուն վրայ կռիւի գնաց, եթէ գեղացիները չմիջամտէին՝ խնդիրը շատ ծանր հետեանք կ'ունենար. բարեկամս շատ կրակոտ անզուսպ մարդ էր:

— Հոս կեցի՛ր, ըսաւ ինծի, հանդարտելէն վերջը, տունս շինեմ լմնցնեմ, կ'երթանք փօստա կը զարնենք:

Պաստայի կեանքը շատ խաղաղ էր: Ուրիշ զբաղում չունէի, բարեկամիս հացը ձրի շուտելու համար՝ կ'երթայի արաք լուծք կը վարէի, հրացան մըն ալ ճարեցի, լաւ ձիեր ունէինք: Պետրոս կտրիճ մարդ էր, երկրագործութեան շատ փափաք չունէր, աչքը աւազակութեան էր, ոչ թէ կողոպուտի համար, այլ որովհետեւ քաջութեան ու փառքի սիրահար էր, կռուելու անզուսպ փափաք ունէր: Եղբայրն ալ պակաս կտրիճ չէր, անոր հետ մօտակայ գիւղերէն մէկը՝ թուրքի մը խանութը բացինք:

Օր մը, մարդասպան մըն ալ ինկաւ մեր օճախը, իրեն ապաստան տուինք, մարդը կասկածելի կ'երեւէր ինձ: Օր մը, Պետրոս քաղաք գնաց. գիշերը արթընցայ և տեսայ որ նորեկը հոն չէ. ամէն կողմ նայեցայ. մեր գէնքերը տեղերնին էին. խիտուր մտայ, մէկ ձին պակաս էր: Պետրոսին եղբայրը արթնցուցի, մարդուն ետե ինկանք, հետքը կորսուեր էր, պարապ ետ դարձանք:

Գիշեր մը, մեր դրացիին տունը գողերը կը ծակէին, մեր տունէն անոնց պատին տակ երկու մարդ տեսայ, գէնքերս առած դուրս ելայ, մարդոցը քով գացի, զիս տեսնելուն՝ երկուքն ալ փախան:

Այս դէպքը զիս հերոսացուց: Գեղացիները պատկառանքով կը խօսէին հետս: Դրացիներ շատ պատիւներ ըրաւ. կ'ուզէին որ գիւղը մնամ, առաջարկե-

ցին որ աղջիկ մըն ալ տան, կարգուիմ, տուն տեղ  
ըլլամ:

Ա՛լ ձանձրացայ Պասսայէն. արարներու քով մը-  
նալու համար չէր որ Աքքեայէն փախեր էի: Պետ-  
րոսն ու իր եղբայրը տեղ մը կուրի գացեր էին, ա-  
ռիթէն օգուտ քաղեցի, եթէ հոն ըլլային անկարելի  
էր թող տային որ երթայի: Մնաք բարով ըսի գրացի-  
ներուն, ու կրկին ճամբայ ելայ: Անգամ մըն ալ առանց  
ընկերի, առանց որոշ ծրագրի՝ թափառական կեան-  
քը կը սկսէի: Վտանգին դէմ երթալն ալ տեսակ մը  
հաճոյք ունէր՝ զոր հանգիստ ապահով կեանքի վար-  
ժուողները չեն կրնար ըմբռնել:

Երկու երեք օր քալեցի: Լերան մը վրայ սպի-  
տակ վրաններ կային, անոնց մօտ գացի, քիչ մը հե-  
ռուն նստայ: Վրաններէն մարդ մը իմ քովս եկաւ:

— Դուն ի՞նչ ազգէ ես, հարցուց:

— Քուրդ:

— Շիտակն ըսէ՛:

— Հայ եմ:

— Անունդ ի՞նչ է:

— Չուզեցի անունս տալ:

Օտարականը բարի մարդ մը կ'երևէր, ի՞նչու  
պարագ տեղը խաբեմ՝ մտածեցի: Մարդը արդէն  
կը կասկածէր, վերջը պատմեց, թէ իմ փախուստիս  
լուրը ամէն տեղ տարածուեր է, պատկերներս զըր-  
կեր են շրջակաները հրահանգ տալով թէ ո՛վ որ զիս  
տեսնէ կառավարութեան յանձնէ:

Օտարականին վրանը զիս պատուեցին արևելցու  
հիւրասիրութեամբ: Ծանօթացայ տան տիկնոջ: Բա-  
րեկամս յայտնեց թէ որքան որ կ'ուզէին զիս իրենց  
քով պահել, սակայն այս կողմերը շատ անապահով  
էին, ասոր համար զիս կ'ուզէին Լիբանան զրկել  
ուրիշ բարեկամներու:

Օտարականին յանձնարարութեամբ Լիբանան ու-  
րիշ օտարականի մը տունը ներկայացայ. բարեկամս  
իմ մասին գրեր էր, նոր տանտէրը առաջինէն ալ ա-  
ւելի սէր ու համակրանք ցոյց տուաւ: Սեղանի նըս-  
տանք. զիս ծանօթացուց կնոջը: Հանդէսէ վերջ, ը-  
սաւ թէ զիս ապահով տեղ մը շատ ազնիւ մարդոց  
պիտի գրկէ: Բաժնուեցանք տունէն. մարդը հետս ե-  
կաւ ձիով զիս ճամբու դնելու. ինծի ալ ձի մը վար-  
ձեր էին: Ճանապարհին օտարականը քսակը հանց:

— Բաղդէդ դրամ քիչ ունիմ քովս, ըսաւ, քը-  
սակը հանց, տասը արծաթ կար մէջը:

— Ա՛ն, քեզի դրամ շատ պէտք է:

Մերժել ուզեցի, մարդը բռնի տուաւ:

Սահլա ուրիշ օտարականներու տունը մնացի:  
Տանը մէջ պահեցին զիս. այնտեղ բարեբաղդաբար  
ազատ էի. ձի հեծնելով մարդոցը աղան ու աղջիկը  
պատիլ կը տանէի, ասիկա գործ սեպելով ինծի դը-  
րամ ալ կուտային: Լիբանանէն միջոց գտայ Պօլիս  
բարեկամի մը հետ թղթակցելու. անկէ իմացայ թէ  
զիս կը փնտռեն դեռ, անոր միջոցով ընտանի-  
քէս լուր առի, բանտէն փախչելէս իվեր աշխարհէն  
տեղեկութիւն չունէի: Օտարականները կ'ուզէին որ  
միշտ իրենց քով մնամ, զիս կը համոզէին, թէ քիչ  
վերջ երբ Հայկական Խնդիրը լուծուի, ես ալ կրնամ  
Մուշ դառնալ ընտանիքիս քով: Ամէն միջոց կը  
գործածէին որ դո՛ւ մնամ: Դժբաղդաբար, այդ կեան-  
քն ալ հրապոյր չունէր ինծի համար: Անհանգիստ  
էի, խաղաղ ապրիլը չէի սիրեր: Պէտք է ըսեմ թէ  
կեանքիս մէջ այս օտարականներուն պէս ազնիւ ու  
անչափսնդիր մարդոց չեմ պատահեր, ամենքն ալ  
մէկը միւսէն աւելի՝ ազնիւ կերպով վարուեցան հե-  
տը. իրենց անձանօթ էի, բայց եղբօր մը ձեռքը

տուրն ինծի՝ երախտապարտ մնացի ես այդ բարեսիրտ ,  
մարդասէր օտարականներուն : Տան տէրս և արիկինը  
երբ տեսան թէ հաստատ որոշեր եմ երթալ, զիս  
Պէյրուսթ զրկեցին բարեկամի մը որ զիս նաւը դնէ :  
Պէյրուսթի մէջ քիչ մնաց որ բռնուէի . ոստիկան մը  
վրաս կասկածեր էր . զիս տան մը մէջ փակեցին ,  
բարեկամներս չթողուցին որ դուրս ելլեմ :

Կարգադրութիւն եղեր էր մակոյկավարներու  
հետ որ զիս գիշեր ատեն նաւը տանին : Որոշեալ ժա-  
մուն ծովեզերքը գացի , դժբաղդաբար մակուկավար-  
ներ իրարու հետ կռուեցան , մէկը գնաց ընկերները  
մատնեց : Մակուկավարներէն մէկը վտանգը աչքը  
առաւ , զիս մակոյկը դրաւ և քշեց դէպի նաւը : Ճամ-  
բան մակուկավարը երկու ոսկի ուղեց , վէճի բռնուե-  
ցանք , հասանք նաւը , այն ատեն ալ նաւուն մար-  
դիկը ներս չառին , սանդուխները վեր քաշեցին . որ-  
քան աղաչեցի շոքենաւուն վրայ կեցողներուն , մէկը  
մաիկ չէր ըներ :

Ուրիշ ճար չկար . նաւը չէր ընդուներ , ետ դառ-  
նալ կրկին բանտ ըսել էր , իսկ ծովուն վրայ մնալ  
անկարելի էր : Տեսայ որ նաւուն կապուած պզտիկ  
մակոյկ մը կար , ըսի նաւավարիս որ զիս հոն տանի ,  
պարապ մակոյկին մէջ տեղաւորուեցայ , նաւավարս  
ետ դարձաւ , մնացի հոն մտածումներու մէջ . եթէ  
առաւօտուն ոստիկանները գան նաւը մտնելէս առաջ՝  
կը խորհէի , ա՛լ ազատում չի կայ : Առաւօտուն դեռ  
հազիւ լուսցեր էր՝ հեռուէն մակոյկ մը եկաւ դէպի  
նաւը , նորեկները զիս տեսան , մօտեցան ինծի և հար-  
ցուցին թէ հոն ի՞նչ գործ ունիմ : Եղածը պատմեցի ,  
մարդը հրամայեց որ զիս նաւը հանեն . նաւապետն  
էր նորեկը :

Նաւապետը իր մարդիկը յանդիմանեց զիս ներս

չառնելնուն համար , ինձ ալ ըսաւ որ երբէք չվախ-  
նամ , «քէֆիս նայիմ» :

Յաջորդ օրը , նաւը Կիպրոս հասաւ : Նաւապետը  
դուրս կ'երթար , աղաչեցի որ զիս թողու երթամ ,  
մարդը չի թողուց , յամառեցայ , մտիկ չըրաւ , գնաց :  
Երբ ետ դարցաւ , միւսները պատմեցին թէ ինչքան  
անհանգիստ էի , նաւապետը ջանաց զիս համոզել որ  
նաւը մնամ և ըսաւ . «Ես քեզ բարեկամներու քով կը  
տանիմ , քենէ դրամ չեմ ուզեր» : Մտիկ չըրի , մար-  
դը տեսաւ որ չեմ համոզուիր յաջորդ օր հետը ցա-  
մաք տարաւ : Գացինք քաղաքը , դազինօ մը մտանք ,  
նաւապետս զիս հիւրասիրեց . դիմացը երեք հայեր  
կային , մէկը չէր ուզեր հետս խօսիլ : Նաւապետին  
մեկնելու ժամանակն եկաւ , հանեց քսակէն քանի մը  
ոսկի տուաւ : Մերժեցի դրամը , ստիպեց , չառի :

— Ծօ՛ , ա՛ն , ծովէն դգալով ջո՞ւր կը պակսի ,  
ըսաւ հայերէն մէկը , ոսկիներու տեսքէն աչքերը  
վառուած :

— Լուէ՛ , անպիտա՛ն , մինչև հիմա ինչո՞ւ բերանդ  
չէր բացուեր , զիս քեզի պէս ստորին հայերէ՞ն կը  
կարծես . . .

Նաւապետը՝ իր դրամը մերժելուս նեղացած՝  
ձեցեց գնաց : Յաջորդ օրը , կրկին եկաւ , բայց այս  
անգամ հետս չի խօսեցաւ : Իմացայ որ Նիքոսիա Հա-  
յոց եկեղեցի կայ , հոն գացի : Հարցնելով գտայ եկե-  
ղեցին : Վարդապետ մը եկաւ դուռը :

— Պառկելու տեղ մը կա՞յ , հարցուցի :

— Հոս հօթէ՞լ է՝ թէ խան , ըսաւ բարկացած  
կրօնաւորը : Այս տեղ պառկելու տեղ չի կայ , գնա՛ ,  
գնա՛ . . .

Վտանդի երկիրը՝ օտարականներ իրենց դուռը  
բացեր , զիս պահէր ու խնամեր էին , բայց հոս , ա-

զատ հողի վրայ, Հայ Եկեղեցիին դռնէն զիս կը վը-  
ռընտէին: Ձգուանքով գլուխս անդին դարձուցի:  
Ուրիշ մարդ մը տեսայ. ժամկոչն էր, տամարդի վար-  
դապետէն քիչ մը աւելի բարեկիրթ: Հետը խօսեցայ,  
հայրենակից ելանք, իր սենեակը գացինք, անուշ  
խօսակցութիւն մը սկսանք:

Մշեցի ժամկոչը խօսելէն չէր կշտանար, սակայն  
մէկ երկու անգամ դուրս գնաց եկաւ:

Քիչ վերջ ուրիշ մէկը ներս մտաւ:

— Տիկին Կ. կ'ուզէ քեզ տեսնել:

— Ես Տիկին Կ. ի հետ ի՞նչ գործ ունիմ, պա-  
տասխանեցի:

Մարդը գնաց, վարժուհին եկաւ:

— Տիկինը կ'ուզէ որ անպատճառ դաս:

Հասկցուեցաւ որ հայրենակիցս գաղտնիք պահել  
չէ գիտցեր, վագեր վարժապետին պատմեր է վրա-  
յովս, վարժապետն ալ տիկնոջ ըսեր է:

Ժամկոչը լացը փրցուց:

— Եթէ չերթաս՝ զիս կը վռնտեն:

Գացինք Տիկնոջ հարցաքննութեան:

— Ի՞նչու չէիր դար:

— Անծանօթ տեղ... կ'ամշնայի:

— Ո՞ւսկից կուգաս:

— Աքքեայ էի, երեք տարի հոն մնացի, ժամա-  
նակս լրացաւ, ազատեցայ:

— Երեք տարուան համար մարդ Աքքեա կը դըր-  
կե՞ն, հարցուց:

Տեսայ որ Տիկինը կարծածէս աւելի բան գիտէ:  
Ուսսփողական պատասխաններ տուի, բայց որքան  
անորոշ խօսէի՝ այնքան հետաքրքրութիւնը կը շատ-  
նար, վերջապէս կերպով մը ազատեցայ:

Քաղաքին փողոցները կը շրջէի. խանութ մը տե-  
սայ. մէջը հայերէն կը խօսէին. հայ ըլլալս գիտցան:

— Ներս հրամայեցէ՛ք, ըսաւ ժամագործը:

Նշանաւոր ժամագործն էր որ ժամացոյցներէն ա-  
ւելի յեղափոխականներով կը զբաղէր:

Ժամագործին քովն էին Ամերիկայէն եկող կարգ  
մը երիտասարդներ, որոնցմէ մէկը՝ Ապահը օձիքէս  
բռնեց:

— Անուշ ի՞նչ է:

— Յովհաննէս:

— Դու Միսօ՞ն ես:

— Ոչ, չեմ:

— Եկո՛ւր, քեզ տանինք ընկերներու քով:

Գացինք առն մը: Հոն շատ ուրիշներ ալ կային:

Մէկը ոտքի ելաւ ու օձիքս բռնեց:

— Ձիս չե՞ս յիշեր, հայրենակի՛ց, քեզի հետ վան-  
քը չտեսնուեցա՞նք...

Գաղտնիք պահել ա՛լ կարելի չէր: Ծանօթացանք  
իրարու: Ճանչցայ նաև տեղացի ուրիշ հայրենասէր-  
ներ:

Նոր ընկերներուս հարցուցի.

— Ո՞ւր կ'երթաք:

— Կիլիկիա:

— Ո՞ւր է Կիլիկիա, հոն ի՞նչ գործ կրնայ տես-  
նուիլ:

— Անո՛նք ալ Հայ են, ըսին:

— Ես Հայաստան կը ճանչնամ, ըսի, իմ գիտցած  
տեղս կ'երթամ: Հոն կ'աշխատիմ, հոն կը մեռնիմ...

Պայման դրինք որ իրենց հետ Կիլիկիա մտնեմ,  
իրենց քով միայն երկու ամիս մնամ, անկէ վերջ՝  
կրկին Հայաստան երթամ:

Երիտասարդ ընկերներս արդէն պատրաստու-  
թիւն տեսեր էին: Առաջատանաւ մը վարձեցինք:  
Գիշերանց գաղտնի նաև գացինք: Ծովեզերքը եկան

Կիպրոս մնացող ընկերներ: Ընկեր մը շիշ մը օղի հանեց գրպանէն: Կենացներ պարպեցին, Ազատութեան կրակոտ խօսքեր ըրին, յաջողութիւն մաղթեցին մեր ձեռնարկին: Վերջին անգամ մըն ալ իրար համբուրեցինք և նաւը ելանք: Առաւօտուն կղզիէն հեռացեր էինք: Նաւապետը առաջ չէր գիտեր մեր ինչ մարդիկ ըլլալը: Տորեկին թրքական պահականաւ մը երևցաւ որ դէպի մեզ կուգար: Մարդը սարսափեցաւ, առաջարկեց որ զէնքերը ծովը թափենք:

— Նաւը կը կոտորենք, զէնք չենք տար, պոռացինք ամենքս մէկ:

Նաւապետը ըմբռնեց թէ սովորական մարդոց հետ չէ գործը, մեզ գինիի տակառներուն քով տեղաւորեց, որպէսզի, հեռուէն առաջաստանաւուն վրայ բազմութիւն չերևի. թիւրք պահականաւը՝ առանց մեզի ուշադրութիւն դարձնելու՝ անցաւ գնաց:

Հեռուէն երևեցան Կիլիկիոյ լեռները: Տղաքը ուրախութեամբ երգել սկսան:

— Ա՛ռ քեզի նաւ մը ժանտախտ, Սուլթա՛ն Համիտ, պոռաց մէկը:

Սրբար նաւաստիները համակրանքով կը դիտէին մեր շարժումները: Երբ նաւը մօտեցաւ ցամաքին սաստիկ ալէկոծութիւն կար: Թրքական կայաններուն մէկուն քով պէտք էր ցամաք ելլէինք: Նաւապետը վախի ու վարանու մի մէջ էր: Այն ատեն կըտրիճ նաւաստիները:

— Մի՛ վախնաք, ըսին, թուրքին ու ծովուն հետ կը կռուինք, ձեզ տեղերնիդ կը հասցնենք:

Օրը մթնեք էր: Ալիքները քարերը կը ձեծէին: Նաւապետը «Շատ վտանգաւոր տեղ է», կ'ըսէր: Մակոյկները նստանք եօթ եօթ հոգի: Նաւաստիները թիւրք քաշեցին, ալիքներուն վրայ կը տարուէինք: Ընկերներէն մէկը երգ մը սկսաւ.

— «Երբ ալէկոծ»...

Առաջին տողի կէսին՝ ահագին ալիք մը եկաւ մակոյկը շրջեց: Ծովը թափեցանք: Եթէ նաւաստիները չօգնէին՝ երկու երեք հոգի կը խեղդուէին: Թըրջած, յոգնած ցամաք ելանք: Մութին մէջ անծանօթ մը՝

— Դուք Աղասիին մարդիկն էք, հարցուց:

Գիտցանք որ մարդը հայ է:

Անծանօթը առաջարկեց որ մեզ Աղասիին տանի, ձամբան ցոյց տուաւ: Բարձրացանք Սուէտիս:

Սուէտիոյ պատմութիւնը մեր միւս ընկերները կրնան պատմել: Գիւղացիներուն հետ կեցանք ժամանակ մը, ժամանակ մըն ալ լեռը: Տեղացի երիտասարդութիւնը մեզի հետ էր: Մարդիկ կային որ կ'ուզէին հակառակիլ, բայց մեզմէ կը սարսափէին: Ժողովուրդին մեծամասնութիւնը, ծեր, կին ու երախայ, սրտով կապուած էր մեզի հետ: Սուէտիոյ մէջ մասնաւոր գործ մը չկատարեցի: Միայն երբ դրամը հատեր էր ու մեզի ալ ձի պէտք էր, հետս մէկ երկու ընկեր առած՝ հեռու գիւղ մը, Շէյխի մը տունը գացի: Լուր առեր էինք թէ Շէյխը շատ դրամ ունի: Ընկերներս պահապան թողուցի, ներս մտայ: Շէյխը զետին դրի. սպառնալիքով դրամին տեղը ըսաւ: Դժբաղդաբար միայն 7 ոսկի ունէր:

Ուրիշ ատեն մը, Սուէտիայէն դուրս երթալու ժամանակ, քուրդ վրան մը կողոպտեցինք: Կինները ոսկի զարդեր ունէին, զարդերը իրենց ետ դարձուցինք, միայն 25 ոսկի առինք:

Սուէտիոյ մէջ օտարականներու ներկայութիւնը, և այս տեսակ մանր մուներ պատահմունքները չափազանց խոշոր դէպքերու պէս իրարու կը պատմէին թուրքերը: Կառավարութիւնը հսկումը սաստկա-

ցուց : Մենք տեղէ տեղ կ'երթայինք . շատ զգուշութիւն ալ չէինք ընելք : Աղասիին հետ Զէյթուն գացի : Զէյթունէն Հաճին զրկեցին : Ճամբան գարանթինա կար , սպաննալիքով ոստիկանները վախցուցի , անցայ շղթայէն : Բայց անունս և դէմքս ճանչցեր էին : Քանի մը օրէն գիւղացիի հագուստով ծպտած՝ Ատանայ կը մտնէի : Քաղաքին քով , կամուրջին վրայ ձերբակալուեցայ :

Ձիս հարցաքննեցին :

— Պայագիտցի եմ , ըսի :

— Հոս ի՞նչ գործ ունիս :

— Ոչխար բերի ծախելու :

Պայագիտի կուսակալին անունը հարցուցին : Չէի գիտեր : Հեռագրով Պայագիտ հարցուցին : Յայտնուեցաւ որ կասկածելի մարդ եմ , ձեռքերս կապած Միսիս զրկեցին : Միսիսէն ճամբայ հանեցին դէպի Փայասի բերդը :

Ճանապարհին՝ ոստիկանները մէկիկ մէկիկ ետ դարձան : Մնաց մէկ ոստիկան մը : Հետս ուրիշ հայ ընկեր մըն ալ կար , անոր ալ ձեռքերը կապուած :

Ոստիկանին հետ հայրենակից եղանք :

— Հայրենակից , խնդրեմ , սա ձեռնակապս հանէ . քովս 100 փարա միայն ունիմ , ան ալ նուէր բեզի :

Ձեռնակապս հանեց մարդը : Բայց փախչելու միջոց չեղաւ : Ոստիկանական յաջորդ կայարանին քով կրկին ձեռնակապը դրաւ ձեռքերս :

Աղաչեցի նոր պահակ ոստիկաններուն որ ձեռնակապը հանեն , մարդիկը կը վախնային , կը կասկածէին թէ կը փախչիմ :

— Ես հետս եմ , եթէ կրնայ թող փախչի , շան պէս կը սատկեցնեմ , պոռաց ինքնավստահ ոստիկա-

նը : Ձեռնակապս հանեց ձին հեծաւ , մեզ առջևը խառնեց : Բաւական հեռացանք կայարանէն :

— Շուտով կ'ազատինք , ըսի ընկերոջս :

Աղբիւրի մը մօտ կայնեցայ , ջուր խմելու : Անտառին մէջ էր : Ոստիկանը՝ ձիուն վրայ՝ հրացանը ձեռը կը հսկէր : Սիկարէթ մը փաթթելով ու խօսելով՝ կամաց կամաց ոստիկանին մօտեցայ : Յանկա՛րծ՝ դեռ մարդը ինչ ըլլալը չգիտցած՝ վրան ցատկեցի , մէկ ոտքէն բռնած՝ մարդը ձիուն միւս կողմը գետին ձգեցի : Ոստիկանին կոկորդը բռնեցի , հրացանը ձեռքէն առի , ընկերիս ձեռնակապը քակեցի : Կապեցինք թուրքը , ճամբէն դուրս տարինք , անտառին խորը , ծառի մը հետ ամրացուցինք : Ձին հեծայ : Հեռացանք :

Հայու ազարակէ մը պաշար առինք : Ան տեղէն առաջնորդ մըն ալ տուին : Երկու-երեք օրէն՝ Չօք Մարզուան մտայ :

Չօք Մարզուան գործիչ մը կար , երիտասարդները ոգևորուած էին : Աղաներէն կը կասկածէին , անոր համար գիշերները գաղտնի ժողով կը գումարէին : Տեղացի քանի մը վստահելի ազդեցիկ երիտասարդներու հետ սկսանք կազմակերպութեան գործը : Ձինուորները տասնեակներու բաժնեցինք , զէնք պատրաստել սկսանք : Հանգանակութիւն կատարելով՝ վառօդ բերել տուինք և բաժնեցինք ամենուն : Դրսէն նիւթական օգնութեան յոյս չի կար , գիւղացիները իրենց միջոցներով կը պատրաստուէին : Դրամ ունեցողները զէնք գնեցին , չունեցողներուն ալ՝ որքան կրնային՝ կ'օգնէին : Գիւղին բոլորտիքը պատնէչ շինեցինք , իրարու վրայ քարեր դիզելով : Առաջուց որոշեր էինք ամէն տասնեակի բռնելիք դիրքը , կատարելու գործը , շրջակայ բոլոր կարևոր դիրքերը հաշիւի առեր և անոնց մարդիկ յատկացուցեր էինք :



Այս գործերը աղաներէն գաղտնի պահել կարելի չեղաւ : Մարդիկը կասկածեցան : Առաջ մտածեր են մեզ կառավարութեան յանձնել, վերջը՝ նկատելով որ ուժերնին ասոր չի բաւեր՝ որոշեր են իրենց զաւակներով ընտանիքով գիւղէն դուրս քաջուիլերթալ : Լրտեսները մեզ իմացուցին թէ թրքասէր աղաները հաւաքուած ժողով կ'ընեն : Երիտասարդներն ալ մէկտեղ խմբուեցան :

— Մեզի հետ թո՛ղ գան անոնք որ պատրաստ են իրենց բարեկամներուն հետ պատերազմիլ անգամ, եթէ հարկ ըլլայ, իսկ անոնք որ կասկածով տարակուսով կուգան մեզի հետ, սրտանց չեն կապուած մեզի՝ թո՛ղ երթան միանան իրենց բարեկամներուն : Այսպէս ըսի երիտասարդներուն : Բայց ամենքն ալ ուզեցին քովս մնալ :

Ամենքս միասին գացինք աղայական ժողովին : Հոն հաւաքուեր էին գիւղին բոլոր մեծերը և ծանր խորհուրդի մէջ էին : Ներս մտանք : Բարև սուռի, բաւա չառին : Մարդիկը շատ բարկացեր էին մեզի դէմ : Մէկը կար հոն, թրքասէրներու գլխաւորը, որ ամենէն աւելի կատղած կ'երևէր :

— Հոս նայէ՛, ըսի անոր, անունդ ի՞նչ է :

— Հայրապետ :

— Կտրիճ մարդ ես, Հայրապետ, բայց գիտցիր որ կեանք չունիս :

— Ի՞նչու, ի՞նչ է յանցանքս :

— Յանցանք շատ ունիս, դու աղքատները կը գրկես, գիւղացին կը խաբես, դու ուրիշներու արիւնը ծծելով հարստացեր ես, հիմա ալ մեզի դէմ ելեր ես : Պատիժդ մօտեցե՛ր է . . .

— Ակոր աղա՛, ի՞նչու չէք խօսիր, աղաչեց մարդը իր ընկերներուն :

— Ի՛նչ խօսեմ, ըսաւ Ակոր աղան : Չորս կողմդ նայէ՛, տե՛ս որո՛նք են, ասոնք բոլորն ալ մեր զաւակներն են, ասո՞նց հետ է որ պիտի կուռինք, տե՛ս մեզ պաշարողները, ասոնք ժամանակին կը գինովնային, իրարու գլուխ կը կոտորէին, հիմա ամենքը լըրջացեր, ամենքը մէկ մարդու պէս մեզի դէմ ելեր են . . .

Աղաները հաւանեցան մարդուն ըսածին, շնորհակալութիւն ալ յայտնեցին ընկերներուս և ինձի, որ գիւղէն դադրեցուցեր էինք գինովութիւնը, կըռիւնները, սակայն, ըսին .

— Ասոր հետ մէկտեղ ի՞նչու անուն կը գրէք, պատնէջ կը շինէք, քաղաքին վրայ յարձակելու կը պատրաստուիք, դուք թշնամին մեր վրայ կը կանչէք . . .

— Աչք ունիք, տեսէ՛ք, ըսի, մենք քաղաքին վըրայ յարձակիլ չենք մտածեր, մեր խորհուրդը գիւղացին վտանգի դէմ պաշտպանել է :

Խօսեցանք աղաներուն հետ, քիչ քիչ ամենքն ալ համոզուեցան, պայման ստորագրեցին որ մեզի հետ ապրին ու մեռնին : Այսպէս վերջացաւ ժողովը :

Կոտորածի լուրերը շուշացան : Լսեցինք Եդեսիոյ շարդը : Դրացի գիւղերու թուրքերը, չէրքէզները շարժումի մէջ էին : Մենք ալ պատրաստուեցանք ինքնապաշտպանութեան :

Օր մըն ալ լսեցինք թէ դիմացի հայ գիւղը պաշարուեր է թուրքերէ և հայերը օգնութիւն կը խնդրեն : Երիտասարդներ զրկեցի : Յանցանքը իրենցն է, կ'ըսէին մերիները . ի՞նչու ժամանակին մեզի հետ չմիացան : Տեսայ որ գիւղացիները չեն յօժարիր դրացի գիւղին օգնելու : Ես գացի հոն, հետս միայն մէկ երիտասարդ եկաւ այնքան ընկերներէս :

Պաշարուած գիւղացիները մէկտեղ հաւաքուեր էին :

— Բարև՛, ըսի, ի՞նչ կ'ընէք հոս, ի՞նչ կը խորհիք :

Բոլորը շուարեր էին :

— Ձեր ըրածը բաւական չէ, հիմա մեզ աս վիճակին հասցնելէ վերջ, եկեր իբր թէ վրանիս կը ցաւիք :

— Բարեկամներ, ըսի, հիմա պատճառը աս էր ան էրի ժամանակը չէ՛, մտածեցէ՛ք, թէ ի՞նչպէս պիտի ազատէք ձեր անձերը, ձեր ընտանիքները :

Կային ոմանք որ կին ու զաւակ ձգելով փախչելու համակիր էին, ուրիշներ կը խորհէին գիւղը մընալ թուրքին գթութեանը ապաւինիլ: Մտածեցի անգամ մը պաշարողներու թիւն և ուժը ստուգել: Քանի մը երիտասարդներով գիւղին շուրջը դարձայ: Գիմացէն տեսայ որ քանի մը ձիաւորներ կուգան: Գիւղը չմտած առջևնին կտրեցինք:

— Ետ դարձէ՛ք, թէ ոչ ամենքդ ալ կրակի կուտանք, պոռացի:

— Ճամբորդ ենք:

— Ճամբորդի օր չէ՛, ետ դարձէ՛ք:

Մարդիկը խօսիլ ուղեցին, տեսան որ մեր խօսքը միայն պարապ ապառնալիք չէ, ետ դարձան:

— Միայն ձեր ետ դառնալը բաւական չէ՛, պոռացի, պէ՛տք է որ ձեր ընկերներն ալ ետ դառնան, պարապ տեղը կեանքի պատճառ մի՛ ըլլաք, չենք ուղեր որ գէշութիւնը մեզմէ սկսի, թէ ոչ հիմա ամենքդ կը կտորէինք:

Թշնամիներու առջև ցոյցի համար գիւղին չորս կողմը խուճերով շրջեցայ:

— Աստուած սիրես, ասոնք ի՞նչ աղգէ են, հար-

ցուցեր է թուրք մը գիւղացիներուն, ո՛ր կողմ դառնանք, զինուած խուճեր կելլեն առջևնիս:

Պաշարողները ետ քաշուելով՝ ճամբան բացուեր էր: Գիւղացիները սկսան ապրանք, անկողին, ուտելիք ևլն. Չօք Մարզուան փոխադրել:

Գիւղը իրարանցումի մէջ էր, ամէն մարդ իր ընտանիքն ու ստացուածքը ապահով տեղ մը տանելու կ'աշխատէր: Մէկ քանի ընկերներով՝ հսկեցի որ ճամբան վտանգ չպատահի: Գիւղին մէջ կը պտտէի տեսնելու թէ ամէն բան կարգին է: Մարդ մը տեսայ որ ձին հեծած փախչելու վրայ էր, կինը ետևը թողուցեր էր: Վրայ հասայ:

— Վա՛ր ի՛ջիր, անպիտան, նախ կինդ տար, վերջը դուն գնա՛, թշուառակա՛ն...

Վախկոտ մարդը հրամանս կատարեց, կինը զբրկեց, վերջը ինքը գնաց: Ըսին թէ մարդը սօքսօր է եղեր և կինն ալ Ամերիկացի:

Մարդ մըն ալ տեսայ որ յարդ բեռցած կ'երթար:

— Աս ի՞նչ է, ո՛ւր կը տանիս, հարցուցի:

— Անասուններուն կեր կը տանիմ:

— Ամօ՛թ քեզի, խայտառա՛կ, պոռացի. ձին առի ձեռքէն աղքատի մը տուի որ ապրանք բեռցնէ:

Առանց հրացանի մը ձայն լսուելու բոլոր գիւղը Չօք Մարզուան փոխադրուեցաւ: Երբ ամենէն վերջը ետ ալ հոն հասայ, տեսայ որ ընկերները՝ Հայկական Դրօշ մը պարզած՝ գիւղին մէջտեղը կեցեր են:

Բարկութեանս չափ չի կար, հայհոյեցի առաջնորդներուն, այնքան գործ կար, պէտք էր դադարեցնուեր տեղաւորել, գէնքի, կերակուրի պատրաստութիւն չի կար, և մեր գործիչները դրօշակ պարզելով կը զբաղէին:

Լուր առի թէ թշնամիները կրկին գիւղը մտան:

Անմիջապէս տասնեակները պատնէշները դրկեցի և քանի մը ընկերներով միւս գիւղը դիմեցի: Ճամբան դէմերնիս ելաւ թշնամին, 200 հոգիի չափ բազմութիւն մը: Առաջնորդնին յիսնապետ մըն էր. հրացանս անոր ձիուն ուղղեցի, ձին վար ինկաւ, մարդը ելաւ կանգնեցաւ, գնդակ մըն ալ անոր տուի: Կըռիւր ընդհանրացեր էր, երկու կողմէն ալ կրակի սկսանք: Թշնամին սակայն շուտով կռնակ դարձուց ու փախաւ:

Կրկին մտանք պաշարուած գիւղը. տեսանք որ թշնամին չէր համարձակեր ներս մտնել: Գիւղը ամայի էր, մէկ հարուստ հայ մը հոն մնացեր էր: Չէր ուզեր ստացուածքէն բաժնուիլ: Գիւղը մնացած ապրանքները Չօք Մարզուան փոխադրեցինք:

Թշնամին, որ երթալով կը գորանար, մէկ երկու օրէն Չօք Մարզուանը շրջապատեց: Մեր պատնէշները մեծ զօրութիւն էին մեզի համար, անոնց ետեւէն կուուելով՝ թէ՛ ապահով կը մնայինք և թէ՛ թշնամին չէր կրնար ստուգել մեր թիւը, ուր որ վտանգը սպառնար՝ հոն կը կեդրոնացնէինք մեր ուժերը: Թուրքերը անկանոն կը կուուէին, կանոնաւոր զօրքը հեռուն կեցեր, ամբոխը առաջ կը քշէին, թէև անոնց մէջ ալ պակաս չէին զինուորական առաջնորդներ: Թուրքերը առաջին անգամ մեծ աղմուկով գիւղին հիւսիսային կողմին վրայ յարձակեցան: Յաղթուելով ետ մղուեցան: Գիւղացիները այս պզտիկ յաջողութենէն ոգևորուեցան: Երբ յաջորդ անգամին թըշնամին աւելի սեղմ կարգերով շուկային վրայ քալեց մերիններուն դիմադրութիւնը աւելի հզօր էր: Թըշնամին յարձակումի կէտը կը փոխէր, հոս ու հոն կեդրոնացնելով իր ուժերը, սակայն մենք ալ ամէն վտանգուած տեղ օգնութիւն հասցնելով բոլոր յարձակումները ետ մղեցինք՝ թշնամին փնասելով:

Թուրքերը ետ դարձան զինուորներէն օգնութիւն առնելու: Զօրապետը վախցեր էր՝ իր 200 զօրքերը յարձակումի անբաւական սեպելով: Ամբոխը կրկին առաջ քշեցին: Այս անգամ արեւմտեան կողմէն եկան՝ Մարզարէն օգնութեան կանչելով: Հըրացանաձգութիւնը կը շարունակուէր անդադար: Թշնամին կորուստով ետ դարձաւ: Վերջին փորձը կատարեցին շուկայի վարի կողմին վրայ քալելով. այն տեղն ալ միայն պարապ տուն մը վառել կրցան, յետոյ ետ քաշուեցան՝ մեզի թողլով յաղթութիւնը:

Տասը ժամ կուուեր էինք անընդհատ: Պզտիկ գիւղ մը անհամեմատ կերպով խոշոր թշնամիին յաղթեր էր:

Թուրքերը անգամ մըն ալ բազմութեամբ մեր վրայ քալելու փորձ չըրին: Ութը օր շարունակ գիւղին բոլորափքը կը շրջէին. պզտիկ կռիւներու մէջ ալ յաղթութիւնը մեր կողմն էր: Բայց դժբաղդաբար գիւղին մեծերուն սիրտը դողալ սկսեր էր: Որքան որ թուրք փաշան խոստումներով, սպառնալիքներով կ'ուզէր որ մեր ղէնքերը վար գնենք, երիտասարդները կը մերժէին, սակայն աղաները գաղտնի համաձայնութեան եկեր էին յանձնուիլ: Եկան ինձ աղաչեցին.

— Դուն մեզի բարիք եղար, հիմա շարիք մի՛ ըլլար, դուն մեր կեանքը փրկեցիր, հիմա գիւղին կործանման պատճառ մի՛ դառնար...

Տեսայ որ գիւղին ազգեցիկ մարդիկը անձնատուր պիտի ըլլան, ափ մը ընկերներ ալ անկարող էին թէ՛ թշնամիին և թէ՛ իրենց ազգականներուն դիմադրելու: Գիւղէն դուրս եկայ: Կիներ, երախաներ ոտքս կը փաթթուէին ու կուլային.

— Ո՛ւր կ'երթաս, մեր քով կեցի՛ր, դուն մեր գատիչն ես...

Արցունքով բաժնուեցանք : Ընկերներով Լեռը ելանք զինուած : Վարը գիւղացիները կը յանձնուէին փաշային : Մենք վերէն անձկութեամբ կը նայէինք , տեսնելու՝ թէ թուրքերը պիտի կոտորե՞ն յանձնուողները : Կոտորած չեղաւ , մենք ալ կամաց կամաց կը բարձրանայինք Լեռը : Վարէն կուգար աղաղակը . — Հայերն էին , քանի մը ժամ առաջ կռուող ու «կեցցէ՛» պոռացող Հայերը , որ հիմա «Փատիչահըմ չօք եաշա» կ'աղաղակէին . . . :

Այս տեղ Մխօն վերջացուց իր պատմութիւնը : Մնացածը արդէն գիտէի : — Զէյթունի հաշտութեան ատեն՝ Կիլիկիոյ շարժումները դադարեցան : Մխօն Չօք Մարզուանի քովերը երկու շաբաթ մնաց , վերջը՝ Ալէքսանդրէթ գալու ատեն մատնուելով՝ բռնուեցաւ և Հալէպի բանտը տարուեցաւ , ուսկից ընդհանուր ներումի ատեն դուրս գալով՝ Արտասահման անցաւ : Երկրէն դուրս ալ՝ Մխօի մտածումներուն առարկան իր Հայրենիքի վիճակն էր , դէպի բեւեռը դարձող մագնիսին նման՝ սիրտը ազատութեան գաղափարին շղթայուած , ո՛ւր ալ երթար՝ իր կեանքի խորհուրդն ու իմաստը իր Հայրենիքի դատն էր : Մշեցի կարիճը հոս հոն դիմեց , մարդիկ , ընկերներ ու միջոցներ փնտոեց՝ անկատար մնացած գործը կրկին շարունակելու համար : Օր մը , Իրօջակեաններու հանդիպեցաւ : Իրօջակեան Ընդհ. ժողովի ժամանակն էր : Մխօն Կովկաս զրկեցին : Այն տեղ Մխօն պատգամաւորներու հետ տեղնուեցաւ , պատմեց իր գիտցածները երկրի և գործերու մասին : Մեծաքանակ գէնքի և խոշոր առասպելական գումարներու խոստումով , գործիչի մը հետ , ճամբայ հանեցին Մխօն դէպի գործի ասպարէզը : Դժբախտաբար Մխօի երջանկութիւնն

երկար չի տևեց : Ճանապարհին՝ իր ընկերոջ զայթակղեցուցիչ վարմունքը իրեն վիշտ՝ վերջէն ալ զայրոյթ պատճառեց : Մշեցիի հոգին կ'ապստամբէր կեղծ ու պատիր գործերու համար : Կիպրոսէն ժընէվ բողոքեց իր տեսած գեղծումներուն դէմ : Ուշադրութիւն չի տուին : Նոյն ատեն , օրերը կ'անցնէին և խոստացուած դրօշակեան հրազենները չէին գար , դրամն ալ չէր երևնար : Հետի ընկերը իր Մշեցիի անկեղծ զայրոյթը կը ծաղրէր : Այն ատեն , Մխօն հասկցաւ , թէ գործ ունի մարդոց հետ՝ որոնց գլխաւոր մտահոգութիւնն էր իր անունը , ունեցած հասցէներն ու ծանօթութիւնը շահագործել : Ա՛լ անկարելի էր ընկերանալ մարդոց , որոնց անկեղծութեանը չէր հաւատար . հրաժեշտ տուաւ Գաշնակցութեան :

Եգիպտոսի ու Ամերիկայի մէջ , Մխօն գտաւ իր հին ընկերները : Հայրենիքի համար իրենին պէս արիւննող սրտեր , իրեն պէս բուն երկրին զաւակներ , որ ժընէվցիներէն տարբեր մտածումներ ունէին երկրին ու գործելու ուղղութեան մասին : Մխօն , որ փորձառութեամբ , մտքի կազմութեամբ , այդ մարդոց կը վերաբերէր՝ հոգւով ու սրտով միացաւ անոնց կազմակերպութեան : Կրակէ , փորձէ անցած երկրի կռուողը՝ արտասահմանի մէջ՝ Հնչակեան Կուսակցութեան ամենէն եռանդուն անդամներէն եղաւ , որ գործեց անդուլ , մինչև իր արեան վերջին կաթիլը հաւատարիմ իր պաշտած Գաղափարին :

Մխօի Ամերիկայի կեանքը ամենուս ծանօթ էր , այս մասին պատմել չտուի , գիտէի թէ Նոր Աշխարհը հրապոյր չունէր Մշեցի կարիճին համար : Կռուի , վտանգի մարդը Հայրենիքի լեռները տեսնելու փափաքով կը վառէր : Գաղափարի մը հաւատարիմ զինուորը , իր սրտին ու մտքին բոլոր ուժերով , այդ գաղափարին ծառայելու ասպարէզին կը ձգտէր :

Այդ համեստ մարդը՝ իր կեանքի պատմութիւնն ըրած ատեն՝ ոգևորուեր, յափշտակուեր, կարծես անգամ մըն ալ փոխադրուեր էր գործելու ասպարէզը: Գիշերը սահեր, գացեր էր, արևը ծագեր էր վաղուց: Վերջին օրն էր որ ես պիտի տեսնէի աննըման Մխօն...

Կտրիճը փափաք մը ունէր, — չէր ուզեր որ իր յիշատակը կորսուի: Երախտագէտ ապագան պիտի կատարէ այդ փափաքը: Անմահ պիտի մնայ Մխօի անունը:

## ՄԻՕՌԻ ՄՊԸՆՆՈՒԹԻՒՆԸ

Անցեալ յունվարին՝ Մխօն մեկնեցաւ Ամերիկայէն: Մեր բաժանումը դառն եղաւ ու սրտապընդող միանգամայն, — դառն՝ այն անձկագին ճակատագրականութեան սարսուռովը զոր ամենքս ալ կը զգայինք, ու սրտապընդող՝ այն յոյսերովն ու ակընկալութիւններովը զորս առաջադրուած գործունէութիւնը կ'արթնցնէր: Ամերիկայի ընկերները չեն կրնար մոռնալ Մխօի վերջին խօսքերն ու արցունքները: Անիկա կարծես նախագագացումն ունէր իր եղերական ճակատագրին:

Տիրութեան ու հիասթափումի օրեր էին: Հընչակեան միութեան դէմ սաղրուած հրէշային դաւադրութիւնը (\*) մեր բոլորին սրտերը խոցեր էր՝

(\*) Տե՛ս «ՈՃՐԱԳՈՐԾ ԴԱՒԱՃԱՆՆԵՐԸ» (Յաւելուած «Հնչակ»ի), — մարդկային անարգութեան, նենգութեան ու տխմար շարութեան այդ անմոռանալի ու սահմակեցուցիչ յիշատակարանը:

հոգեին ջանքերով, անհաշիւ զիջումներով ու զոհողութիւններով իրականացած գաղափարին սնանկութեան հանդէպ:

Եւ սակայն այս բոլոր խուժուժ յուսախարութիւններն ու կսկծեցուցիչ դառնութիւնները չէին կրցեր ջլատել Հնչակեան Կորովը: Ու փոխանակ կենսաթափ հեղգութեամբ մը անշարժանալու՝ Հնչակեան Կուսակցութիւնը՝ աւելի քան երբէք ուժգին թափով մը՝ կը փարէր յեղափոխական Գործին, անոր մէջ միայն փնտռելով դարմանումը իր ներքին ցաւին ու փոխարինութիւնը՝ Միութեան գաղափարին սիրուն կրած իր նիւթական ու բարոյական վնասներուն:

Ու Մխօն ու դեռ ուրիշ Հնչակեան կամաւորներ կը մեկնէին դէպի յեղափոխական գործունէութեան դաշտերը:

Մանրամասնութիւններու մէջ չենք ուզեր մըտնել ու չենք ուզեր բեռնաւորել այս կենսագրական նօթերը: — Արդէն Մխօի սպաննութիւնը՝ իր բովանդակ քստմնելի իրականութեամբը՝ ծանօթ է այսօր Հայ ժողովուրդին:

Մխօ Կովկաս անցած էր, ու Հայրենիք մտնելէ առաջ, իր ճամբուն վրայ այցելած՝ Հնչակեան ընկերներուն, անկեղծ ու ճշգրիտ լուսարանութիւններ տալով անոնց՝ Հնչակեան միութեան դէմ Նազարբէկեան ձիւաղներու սաղրած ոճրագործ դաւադրութեան մասին:

Նազարբէկեան դաւադիր խմբակին պարագլուխները՝ տեսնելով որ ձշմարտութեան ջահը երկնցած էր տարիներէ ի վեր իրենց պահպանած կովկասեան խաւարին մէջ և անկարող՝ խօսքի դէմ խօսք, փաստի դէմ փաստ հանելով ինքզինքնին ու իրենց շահերը պաշտպանելու՝ աճապարեցին եղբունական նա-

մակներ ու շրջաբերականներ տեղացնել իրենց տգէտ ու մոլեռանգ հետեողներուն, «խաչագող», «խաբեբայ» ու «դաւաճան» ներկայացուցին անոնց Մխօի պէս անձնուրաց ու անբասիր զինուոր մը և՛ արիւնախանձ վատութեամբ մը՝ անոնց թելադրեցին Եղբայրասպան Ոճիրը:

Նազարբէկեան ձիւաղներուն եղբայրասպան թելադրութիւններն ու հրահանգները ապարդիւն չի մնացին: — Մխօն բնա՛ւ չէր կասկածեր, թէ Հայ անունը կրողներ պիտի կարող ըլլային նիւթելու իր կեանքին դէմ, և եղբայրական փստահութեամբ մը կը մօտենար ամէն անոնց որ իրեն կը ժպտէին Յուդայի ժպիտովը: Անիկա, իր ճամբուն վրայ, սէր ու համակրութիւն գտեր էր ամէն տեղ: Եւ Նազարբէկեան ձիւաղները դիւրութեամբ յաջողեցան զայն ձգել Եղբայրասպան Ոճիրի թակարդին մէջ: — Փօթիի մէջ, իրենց հետեողները զայն քաղցրութեամբ հրաւիրեցին ընկերական հաւաքումի մը, և հոն՝ սիրալիր խօսակցութիւններէ վերջ՝ օգտուելով Մխօի անփոյթ ու անկասկած գիրքէն՝ խմբովին յարձակեցան անոր վրայ և զայն դանակներով խողխողեցին:

Մխօն ժամու մը շափ ապրեր է իր ահաւոր ու արիւնազանգ վիճակին մէջ: Ի՞նչ եղած են հոգեվարքի իր հուսկ խորհուրդները, շէնք գիտեր: Բայց լսեցինք որ իր արի ու մաքուր հոգին աւանդելէ առաջ՝ մեր պաշտելի ընկերը՝ խեղդուկ ձայնով՝ ըսեր է իր ոճրագործները ձերբակալել ջանացողներուն. — «Թողէ՛ք որ փախին, մի՛ բռնէք այդ մադիկը...»:

Մխօի սպաննութիւնը՝ Նազարբէկեան ձիւաղներուն դէմ ընդհանուր յուզում ու զայրոյթ յառաջ բերաւ Հայ ժողովուրդին մէջ: Հնչակեան ընկերները դառնակսկիւծ արցունքներով ողբացին իրենց անգին

ու անմոռանալի ընկերը և ուխտեցին՝ ամէն զնով ու զոհողութեամբ՝ յամառիլ անոր սուրբ արեամբը ներկուած ճամբուն մէջ և ի գլուխ հանել անոր կիսատ թողուցած գործը:

Հայ ժողովուրդը մասնակցեցաւ Հնչակեան ընկերներու ողբին՝ սգահանգէսներով, որոնք տեղի ունեցան Ամերիկայի գրեթէ բոլոր գաղութներուն, Պուլկարիոյ ու Եգիպտոսի մէջ:

Բայց Հնչակեանութեան սրտին մէջ Մխօի սպաննութեան բացած վէրքը դեռ չգոցուած՝ ուրիշ նոյնքան ու աւելի անողք վէրք մը կուգար բացուիլ ու արիւնիլ հոն: — Մխօի սպաննութենէն հազիւ երկու ամիս յետոյ, Մխօի դեռ չցամքած արիւնին՝ խեղայեղ ու վոեմ՝ հաւատքով մը՝ իր արիւնը կը խառնէր մեր յաւէտ պաշտելի ընկեր՝ Գարեգին Չիթճեան՝ միևնոյն Նազարբէկեան ձիւաղներուն հրահանգովն սպաննուած, Օտէսայի մէջ:



ՍՈՒՐԱ ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ  
ԳՐԱԶԱՐԱՆ  
ST. NERSES SHNOBHALI  
LIBRARY

800

Հայաստանի Ազգային գրադարան



NL0446251

16431

Գին 25 սևին